ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ-ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1990ԱԿԱՆՆԵՐԻՆ

ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ
K86Mkrtchyan@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայաստանի երրորդ Հանրապետութեան պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ ունի հայկական նորանկախ պետականութեան տնտեսական յարաբերութիւնների պատմութեան ուսումնասիրութիւնը: Նման հետազօտութեան կարեւորութիւնը պայմանաւորուած է Հայաստանի Հանրապետութեան (ՀՀ) արտաքին տնտեսական քաղաքականութեան, սահմանակից Իրանի Իսլամական Հանրապետութեան (ԻԻՀ) հետ միջպետական յարաբերութիւնների հաստատման եւ զարգացման իրողութեամբ, որը շրջանում ունի կայունութեան եւ անվտանգութեան նշանակութիւն:

Յօդուածում ներկայացուում է 1990ականներին Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից շրջափակուած ՀՀի՝ ԻԻՀի հետ առեւտրատնտեսական յարաբերութիւնների սկզբնաւորումը: Արխիւային փաստաթղթերի հիման վրայ լուսաբանում է այդ կապերի հաստման եւ զարգացման գործընթացը ղարաբաղեան պատերազմի տարիներին եւ հրադադարի հաստատումից յետոյ, անդրադարձ է կատարւում այդ կապերի հաստատման գործում Իրանի հայ համայնքի ունեցած դերի մասին: Միաժամանակ քննարկւում են այն մտահոգիչ երեւոյթները, որոնք տեղ են գտել այդ յարաբերութիւններում, ինչպէս նաեւ «Իրան-Հայաստան Գազամուղ» ծրագիրը, որի նպատակն է ՀՀի գազի այլընտրանքային մատակարարման ստեղծումը:

ՀՀ-ԻԻՀ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Յետխորհրդային տարիներին ՀՀում կարեւորուել են կապերը հարաւային հարեւան ԻԻՀի հետ, քանզի ՀՀ պետական գործիչների գնահատմամբ ԻԻՀն ընկալուել ու գնահատուել է որպէս տարածաշրջանում մեծ կշիռ եւ դեր ունեցող պետութիւն: ԻԻՀն, աներկբայ, դասւում է այն պետութիւնների շարքին, որոնք հետաքրքրւում են ՀՀով:

Պատմութեան նորագոյն շրջանում ԻԻՀն ՀՀի համար արտաքին աշխարհ դուրս գալու իրական եւ բացառիկ հնարաւորութիւն է: 1991ից անկախացած ՀՀի համար ԻԻՀն անփոխարինելի գործընկեր է, իսկ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի գնահատմամբ՝ «*դժուար օրերի բարեկամ*»[1]: 1998-2008ի ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանի խօսքով՝ ՀՀի համար ԻԻՀն վստահելի ելք է եղել ճակատագրական սպառնալիք դարձող շրջափակումից: Փոխուել են ժամանակները, սակայն մօտեցումները մնա-

ցել են նոյնը: Իրաւացի է ԻԻՀում ՀՀ առաջին դեսպան Վահան Բայբուրդեանը. «*Իրանը նախ եւ առաջ պատուհան է Հայաստանի համար՝ բացուած դէպի արտաքին աշխարհ: Ընդ որում, դա մշտական, կայուն եւ անփոփոխելի արժէք է*»[2]:

ՀՀի արտաքին կապերի զարգացումը չի կարելի լիարժէք համարել առանց ԻԻՀի հետ առեւտրատնտեսական աշխուժ կապեր ծաւալելու:

ԽՍՀՄի փլուզումից յետոյ նախկին հանրապետութիւնները ներքաշուեցին հակամարտութիւնների մէջ: ՀՀն, բացի միքանի երկրների կողմից շարունակուող ոչ-մեծ օգնութիւնից, մնաց միայնակ իր ծանրագոյն հոգսերի հետ: Սրան աւելացաւ հանրապետութեան լիակատար շրջափակումը[3]:

1991 Սեպտեմբերի 21ին ԽՍՀՄ կազմից դուրս գալու եւ անկախանալու հարցով տեղի ունեցած հանրաքուէի արդիւնքների հիման վրայ Սեպտեմբերի 23ին հանրապետութեան գերագոյն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետութիւն: Այսպիսով Հայաստանը դարձաւ միջազգային յարաբերութիւնների լիիրաւ անդամ: Նորանկախ հանրապետութիւնը սկսեց միջազգային ճանաչում գտնել:

Նոյն թուականի Դեկտեմբերին ՀՀ ԱԳ փոխնախարար Արման Նաւասարդեանը դիմում է նախկին ԽՍՀՄում ԻԻՀի գործերի հաւատարմատար Ալի Ռեզա Բիգդելիին, որ կազմակերպի ԻԻՀի պատուիրակութեան այցը Երեւան՝ երկու պետութիւնների միջեւ յարաբերութիւններ հաստատելու նպատակով[4]: Առաջարկւում էր ՀՀի եւ ԻԻՀի միջեւ ստեղծել սահմանային անցակէտեր, ՀՀի տարածքով դէպի Սեւ Ծով կազմակերպել իրանական բեռնափոխադրումներ, կառուցել Իրան-Եւրոպա գազամուղ՝ օգտագործելով ՀՀի տարածքը, ԻԻՀի միջոցով ՀՀ արտահանել թուրքմէնական ուժանիւթի պաշարները, ստեղծել համատեղ նաւթամշակման գործարան, կառուցել 230 մեգաւատ հզօրութեամբ ջրելեկտրակայան Մեղրիում, ՀՀից ԻԻՀ առաքել շարժիչներ, հաստոցներ եւ այլ մեքենաներ:

1991 Դեկտեմբերի 25ին ԻԻՀն պաշտօնապէս ճանաչեց ՀՀի անկախութիւնը[5]: Այդ օրը Մոսկուայում ԻԻՀ դեսպանութիւնը տարածեց յայտարարութիւն. «*ԻԻՀն ողջունում է հայ ժողովրդի կամքի իրականացումը եւ յոյսով է, որ ՀՀն, մտնելով միջազգային հանրութիւն, կարող է կառուցողական դեր խաղալ յանուն իր երկրի ժողովրդի բարօրութեան եւ աշխարհի կայունութեան ու տարածաշրջանի անվտանգութեան*»[6]:

1993 Ապրիլի 3ին Թուրքիան արգելեց իր տարածքով բոլոր տեսակի բեռնափոխադրումները ՀՀ՝ պատճառաբանելով, թէ «դրանք նպաստում են հայերի ռազմական ջանքերին ընդդէմ Ադրբեջանի»: Հայկական ինքնաթիռների առջեւ փակուեց նաեւ Հ-50 օդային միջանցքը: ՀՀն ենթարկուեց թուրքական շրջափակման[7]:

Այսպիսով, 1990ականների սկզբին՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի Հանրապետութեան (ԱՀ) կողմից ՀՀի շրջափակման, իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնութեան (ՌԴ) հետ անմիջական սահմանի

բացակայութեան, ջրային սահման չունենալու եւ վրաց-աբխազական հակամարտութեան պայմաններում ԻԻՀն ՀՀի համար դարձաւ դէպի արտաքին աշխարհ նայող միակ 'պատուհանը':

ՀՀ-ԻԻՀ տնտեսական գործակցութիւնը կարելի է բաժանել 4 փուլերի.- ա) սկզբնաւորում՝ 1991-94, բ) զարգացում՝ 1994-97, գ) համեմատական թուլացում՝ 1998-2000, դ) քանակականից որակական աճի անցում՝ 2000ականներ:

Նախքան միջպետական յարաբերութիւնների հաստատումը (9 Փետր. 1992) տեղի ունեցան մի շարք այցեր[8]: Տնտեսական կապերի սկզբնաւորման գործում իրենց աւանդն ունեցան իրանահայերը: 1991 Մարտին Երեւան է այցելում իրանական 'Սաթի' ընկերութեան տնօրէն Լեւոն Ահարոնեանը[9]: Նա հանդիպում է ՀՀ վարչապետ Վազգէն Մանուկեանին եւ քննարկում Մեղրու կամրջի բացման հարցը: Մանուկեանը Ահարոնեանի հետ 7 հոգուց բաղկացած պատուիրակութիւն է ուղարկում Մեղրի՝ տեղում ուսումնասիրելու վիճակը: Ահարոնեանը զեկոյց պատրաստեց ԻԻՀի փոխադրամիջոցների նախարարութեան, Իրանի առեւտրի պալատի, ԱԳՆի եւ 'Մոսթազաֆան' հաստատութեան համար: Ըստ Ահարոնեանի՝ «երկկողմ գործակցութեան վրայ պատերազմական վիճակը չէր ազդի, որովհետեւ մեր նախագահը եւ ԱԳ նախարարը ճշմարիտ քաղաքականութիւն են տանում՝ յայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը կրօնական չէ, այլ աշխարհագրական ու պատմական խնդիր է»[10]:

1991 Մայիսի 6ին իրանահայ գործարարներ Ահարոնեանի գլխաւորութեամբ Երեւանում մասնակցեցին առաջին միջազգային տնտեսական համաժողովին: Նրանք պաշտօնական Թեհրանի կողմից գործուղուած առաջին բանագնացներն էին եւ նպատակ ունէին փոխադարձ ծանօթութիւն հաստատել ՀՀի հետ: Ժողովի նպատակն էր իւրաքանչիւր համայնքում ստեղծել հայ գործարարների խումբ եւ կապ ունենալ ՀՀի հետ:

Ըստ Ահարոնեանի՝ «*Երբ վերադարձանք Թեհրան, միքանի հոգով սկսեցինք աշխատել այդ ուղղութեամբ եւ ստանալով հանգուցեալ իրաւաբաններ Օննիկ Սահակեանի եւ դկտ. Ալբերտ Բերնարդիի իրաւաբանական եւ գաղափարական խորհուրդները, մտադրուեցինք հիմնել Իրան-Հայաստան Առեւտրական պալատը: Այդ իսկ նպատակով դիմեցինք Իրանի Առեւտրաարդիւնաբերական եւ հանքերի պալատի նախագահ Պ. Ալինաղի Խամուշիին, ով մեզ ուղղորդեց վարչութեան անդամ Պ. Ասգարօլադիի մօտ: Կարճ ժամանակամիջոցում նա մեզ տեղեկացրեց Իրան-Հայաստան Առեւտրական պալատի հիմնադրման պայմանների մասին, եւ մենք անմիջապէս անցանք աշխատանքի ու պաշտօնապէս գրանցեցինք այն:*

Այդ նորաստեղծ հաստատութիւնը կարիք ունէր բիւջէի: Հիմնադիր անդամներից իւրաքանչիւրը սիրայօժար յատկացրեց 400,000 ռիալ: Ես եւ.. Արմէն Մութաֆեանը պալատի անունից ազգային բանկում հաշիւ բա-

ցեցինք եւ Սաթի ընկերութեան շէնքի մի յարկաբաժինը յատկացրինք պալատին»[11]:

Յիրաւի, այս կառոյցը դարձաւ երկկողմ տնտեսական կապերի իւրօրինակ կենտրոն, որը մինչ օրս իր մասնակցութիւնն է ունեցել 16 ցուցահանդէսների կազմակերպման գործում:

Նոյն թուականի Նոյեմբերի 11ին ՀՀ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը, իր պաշտօնամուտի ելոյթում կարեւորում է տնտեսական կապերի հաստատումը ԻԻՀի հետ՝ ՀՀն փակուղուց բանուկ միջազգային խաչմերուկի վերածելու նպատակով[12]:

ՀՀ անկախութեան հռչակումից անմիջապէս յետոյ ստեղծուեց Հայ Գործարարների Միջազգային Համագումարը՝ «Հայ Գործարարների Ֆորում»ը, որի փոխնախագահն էր Ահարոնեանը: Այն ունէր իր 54 ներկայացուցիչներն ԻԻՀում, որոնք ի շահ ՀՀի գործունէութիւն էին ծաւալել: Ֆորումի գործունէութեան շնորհիւ, 1991ից սկսած ՀՀն կարողացաւ օգտագործել Պարսից Ծոցի եւ Կասպից Ծովի իրանեան նաւահանգիստները[13]:

1992 Նոյեմբերին ստեղծուեց Իրան-Հայաստան առեւտրական պալատը նախագահութեամբ Ահարոնեանի: Պալատում ընդգրկուեցին իրանահայ եւ իրանցի գործարարներ[14]: Իրանահայ ձեռնարկատէրերից էին Սեպուհ, Նժդեհ եւ Վիգէն Ասլանեանները, Լեւոն, Ժորժիկ եւ Հենրիկ Ահարոնեանները, Շահբազեան եղբայրները, Ալբերտ Բաբայեանը[15]:

Փաստօրէն ի սկզբանէ ԻԻՀն վճռական էր տրամադրուած ՀՀի հետ տնտեսական գործակցութիւն ծաւալելու եւ կաշկանդուած չէր քաղաքական բնոյթի հարցերով: Փաստն այն է, որ Իրանի հիւսիս-արեւմտեան նահանգներում տնտեսական կեանքն աշխուժացնելու համար, ինչպէս եւ Իրանի պետական շահերից ելնելով 1993ի սկզբին ԻԻՀի հիւսիսում ստեղծուեց նոր՝ Արդաբիլի Նահանգը՝ Արեւելեան Ատրպատական Նահանգի արեւելեան եւ Գիլան Նահանգի հիւսիսային շրջանների հիման վրայ: Այդ քայլով ԻԻՀի իշխանութիւնները փորձում էին տնտեսապէս հաւասարաչափ հնարաւորութիւններ բաշխել այս նահանգներում: Արդաբիլի Նահանգի վարչական պատասխանատուների վրայ դրուեց Ադրբեջանի Հանրապետութեան (ԱՀ) հետ տնտեսական յարաբերութիւնների կազմակերպումը: ԻԻՀ նախագահ Այաթոլլահ Հաշեմի Ռաֆսանջանիի որոշմամբ ՀՀի եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան հետ նման յարաբերութիւններ վարելը յանձնուեց ԻԻՀի Արեւելեան Ատրպատական Նահանգին[16]:

1992 Փետրուարի 1ի դրութեամբ ԱՀի ձեռնարկած շրջափակմամբ ՀՀին պատճառուած ուղղակի կորուստները գերազանցում էին 1 մլրդ ռուբլին: ՀՀն բանակցութիւններ էր վարում ԻԻՀի հետ՝ նրա միջոցով այլընտրանքային ուղիներ գտնելու համար. Փետրուարի 8-10ը Թեհրանում ՀՀի ԱԳ նախարար Ռաֆֆի Յովհաննիսեանի գլխաւորած պատուիրակութիւնը քննարկում է կամուրջի, ուժանիւթի եւ այլ հարցեր[17]: ԻԻՀի արդիւնաբերութեան եւ ֆինանսների նախարար Մոհսէն Նուրբախշը ՀՀ պատ-

ուիրակութեանը առաջարկում է ստեղծել աշխատանքային խմբեր եւ մշակել գործակցութեան երկարաժամկէտ ծրագրեր, Երեւանում եւ Թեհրանում հիմնել բանկեր՝ կատարելու առեւտրական գործարքներ[18]:

1992 Մարտի 1ին Թեհրանում կողմերի միջեւ կնքուած համաձայնագրով նոյն թուականի Ապրիլի 21-26ը ՀՀ մի շարք ձեռնարկութիւններ մասնակցեցին Թեհրանի Արհեստագիտութեան, Էլեկտրոնիկայի եւ Համակարգիչների 2րդ Միջազգային Ցուցահանդէսին: Իրանական կողմը ՀՀին անվճար յատկացրել էր 24 մ² տարածք: Մինչդեռ նախնական պայմանաւորուածութեամբ յատկացուելու էր 150 մ² տարածք: 300 հաստատութիւնների ներկայացուցիչներ այցելեցին հայկական տաղավար, ձեռք բերուեց գործակցութեան պայմանաւորուածութիւն[19]: Ցուցահանդէսին պէտք է մասնակցէր ՀՀ առեւտրական արդիւնաբերութեան պալատի 'Եունիսերվիս' ընկերութիւնը[20], որը, սակայն բացումից մէկ շաբաթ առաջ դադարեցրեց ցուցահանդէսի կազմակերպման աշխատանքները[21]: 1991 Դեկտեմբերի 1ին Շարժա քաղաքում կողմերի միջեւ ստորագրուած համաձայնագրով 1992 Մայիսին Երեւանում բացուելու էր ԻԻՀի ցուցահանդէս[22]: Սակայն բացումից մէկ շաբաթ առաջ իրանական կողմը հրաժարուեց: Դրա պատճառը հայկական զինուժի կողմից Շուշիի ազատագրումն էր:

1992 Մայիսի 6-8ը ՀՀ նախագահ Տէր Պետրոսեանի՝ ԻԻՀ այցի ընթացքում ԻԻՀի նաւթի նախարարութեան եւ ՀՀի վառելիքաէներգետիկ ռեսուրսների նախարարութեան, ՀՀի եւ ԻԻՀի տարանցիկ, արտահանուող ու ներմուծուող ապրանքների եւ ուղեւորների երթեւեկութեան, մաքսային գործակցութեան, ԻԻՀ եւ ՀՀ կենտրոնական բանկերի, ՀՀ եւ ԻԻՀ միջեւ ստորագրուեցին առեւտրի համաձայնագրեր:

1992 Օգոստոսի 25ին ՀՀի ԱԳ փոխնախարար Նաւասարդեանը ՀՀում ԻԻՀի գործերի հաւատարմատարի պաշտօնատար Ազիմ-Զադէի հետ քննարկեց Հոկտեմբերի 2-10ը Թեհրանում կայանալիք ցուցահանդէսին ՀՀի մասնակցութիւնը[23]: Այդ ցուցահանդէսին ՀՀի մասնակցութեան հրաւէրն ուղարկուել էր ուշացումով: Հայկական կողմը խնդրում է յստակեցնել վճարումների չափը՝ առաջարկելով Երեւանի ցուցահանդէսում փոխադարձաբար տարածքներ տրամադրել անվճար: Սակայն Ազիմ-Զադէն յայտնում է, որ պայմանները բոլոր երկրների համար միեւնոյնն են եւ ԻԻՀն բացառութիւն չի անի: Նոյն հարցով 1992 Օգոստոսի 26ին ՀՀի ԱԳՆն դիմում է ԻԻՀ դեսպանութեանը[24], սակայն ապարդիւն:

Երկկողմ յարաբերութիւնների այս փուլում տնտեսական բնոյթի հարցերը՝ անգամ ցուցահանդէսներին հայկական կողմի մասնակցութեան հարցը, իրանական կողմը պայմանաւորում էր Լեռնային Ղարաբաղի ռազմական գործողութիւններով: Թերեւս՝ Երեւանի հետ խուսափելով տնտեսական նոր նախաձեռնութիւններից, Թեհրանը չէր ցանկանում քաղաքական խնդիրներ ունենալ Բաքուի հետ: Մինչդեռ ՀՀի համար տնտեսական ցանկացած գործակցութիւն (առաւել եւս տնտեսական

ուղղուածութեամբ միջազգային ցուցահանդէսը) ունէր կենսական նշանակութիւն: Դրանք հնարաւորութիւն էին տալիս լրացնել տնտեսական տեղեկատուութեան պակասը, պատկերացում կազմել արտասահմանեան ընկերութիւնների ձեռքբերումների մասին, կատարել փորձի փոխանակում, կնքել գործակցութեան նոր պայմանագրեր, ուսումնասիրել տարբեր ապրանքների վերաբերեալ պահանջարկը՝ ըստ թիրախային ոլորտների, եւ առաջարկը՝ ըստ ՀՀ տնտեսական հնարաւորութիւնների, ստեղծել գործընկերային կապեր պետական մարմինների, մասնաւոր ձեռնարկութիւնների եւ հասարակական կազմակերպութիւնների հետ:

1992 Սեպտեմբերին ՀՀն նախընտրեց հացահատիկ գնել Թուրքիայից, եւ ոչ ԻԻՀից՝ չնայած ԻԻՀ նախագահի եւ ՀՀ ԱԳ նախարարի միջեւ ձեռք բերուած՝ ՀՀի համար նպաստաւոր պայմանաւորուածութեանը: Մինչդեռ ԻԻՀն շարունակում էր ԱՀին տնտեսական օգնութիւն ցոյց տալ. Նախիջեւանը գրեթէ ԻԻՀի հաշուին էր ապրում, ԻԻՀից ստացած վառելանիւթի մի մասը Թուրքիա էր տեղափոխում[25]:

1992 Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին ԻԻՀում ՀՀ գործերի հաւատարմատար Բայբուրդեանը[26] ալիւրի հարցով բանակցութիւններ վարեց ԻԻՀի Մթերումների Նախարարութեան հետ[27]: Սակայն ալիւրի առաքման գործը յետաձգւում էր, քանզի պայմանագրով նախատեսուած էր գումարը վճարել կանխիկ կամ եւրոպական բանկերում գրաւ դնել համապատասխան արժէքներ: Կողմերի միջեւ կնքուած ալիւրի գնման պայմանագրով ՀՀն պէտք է 7 մլն. դոլարի նախնական մուծում կատարէր, ինչը ծայրայեղ դժուար էր, քանզի շրջափակման պատճառով արդիւնաբերութիւնը չէր աշխատում եւ ՀՀն գտնւում էր դրամական անմխիթար վիճակում: ՀՀն ԻԻՀի կառավարութիւնից խնդրում է կարճաժամկէտ վարկ՝ պայմանագրով նախատեսուած ալիւրը կամ նրա մի մասը գնելու համար[28]: Շրջանառւում էր նաեւ մէկ այլ տարբերակ. ԻԻՀն ՀՀին ցորեն է տալիս Մեղրիի տարածքով եւ փոխարէնը ետ ստանում Պարսից Ծոցում: Վերջին տարբերակը աւելի իրատեսական էր, բայց համաձայնութեան մասին Երեւանից պատասխան չկար: Բայբուրդեանը զբաղւում էր նաեւ մազութի հարցով[29]:

ԻԻՀն յետխորհրդային հանրապետութիւններում հիմնել էր վաճառատներ, որտեղ վաճառւում էին իրանական ապրանքներ: Բայբուրդեանը 1992 Հոկտեմբերի 31ին առաջարկում էր ԻԻՀի ԱԳՆի Արեւելեան Եւրոպայի վարչութեան պետ Բահրամ Ղասեմիին Երեւանում եւս բացել նման խանութներ, որոնք կը խթանէին դանդաղ զարգացող առեւտրական կապերը: Ղասեմին յայտնում է, որ պատրաստ են վաճառատուն բացել Երեւանում: Նրա խօսքով՝ հայկական կողմը պէտք է ընդունի ԻԻՀի ներքին որոշ դժուարութիւններ եւ շատ հարցեր մեկնաբանի այդ տեսանկիւնից: Նա նշում է, որ երկկողմ յարաբերութիւնները պէտք է ունենան անշեղ եւ հետեւողական զարգացում, սակայն այդ ամէնը պէտք է կատարուի առանց աղմուկի եւ աւելորդ քարոզչութեան[30]: Խուսափելով ՀՀ-ԻԻՀ տնտե-

սական կապերը քարոզչութեան ենթարկելուց՝ Թեհրանի նպատակն էր չեզոքացնել Բաքուի հակազդեցութիւնը:

Անուրանալի է, որ ղարաբաղեան պատերազմի տարիներին՝ մինչեւ 1994 Մայիսը, ԻԻՀն դարձաւ ՀՀին սննդամթերքի եւ նաւթամթերքի մատակարարը (մօտ 100%), յատկապէս ձմռան ամիսներին: 1992 Հոկտեմբերի 26ին ԻԻՀի նախագահ Ռաֆսանջանիի գումարած խորհրդակցութեանը, վերջինս յայտարարել էր, որ բացի զէնքի արգելքից ոչ մի խոչընդոտ չպէտք է լինի ՀՀի հետ առեւտրի ու ապրանքափոխանակութեան գործում: Նա խիստ զգուշացրել էր, որ կարգադրութիւնը չկատարողները անմիջապէս կը բերուեն Թեհրան՝ պատասխանատուութեան[31]:

1992 Նոյեմբերի 11-15ը Երեւանում Ղասեմին մի շարք հանդիպումներ է ունենում ՀՀ ղեկավարութեան հետ, քննարկում ՀՀի ու Լեռնային Ղարաբաղի տնտեսական իրավիճակի, ստորագրուած համաձայնագրերի կատարման ընթացքին առնչուող հարցեր: Իրանական կողմը տեղեկացնում է ՀՀ ալիւր առաքելու համաձայնագրի ընթացքի մասին: Հայկական կողմը դանդաղ էր աշխատում այդ հարցում, եւ արդիւնքները գոհացուցիչ չէին: Տեղին է նշել, որ ԻԻՀն հացահատիկ ներմուծող երկիր է եւ օրէնքով արգելուած է ցորենի կամ ալիւրի արտահանումը: ԻԻՀ իշխանութիւնները նախագահ Ռաֆսանջանիի հրահանգով եւ խորհրդարանի համապատասխան յանձնաժողովի վաւերացմամբ **արտօնել էին ալիւրի վաճառքը ՀՀին:** Ե՛ւ տնտեսական, ե՛ւ քաղաքական տեսանկիւնից սա կարեւոր ձեռքբերում էր: Առկախ էր միայն վճարման խնդիրը: Ղասեմին առաջարկում էր վճարման միքանի տարբերակ: Հնարաւոր տարբերակը ՀՀ կողմից մասնաւոր անձանց վաճառած ապրանքի դիմաց փոքր խմբաքանակներով ալիւրի առաքումն էր:

Շրջափակման մէջ գտնուող ՀՀին պատմական տուեալ օրհասական պահին օգնած Իրանի նախկին նախագահ Ռաֆսանջանիի մահուան կապակցութեամբ 2017 Յունուարի 9ին ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիին յղուած ցաւակցական հեռագրում ՀՀ նախագահ Սարգսեանն ափսոսանքով յայտնում է. «*Հայ ժողովրդի յիշողութեան մէջ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին կը մնայ որպէս հարեւան երկրի Նախագահ, որի պաշտօնավարման օրօք են հաստատուել առաջին միջպետական կապերը նորանկախ Հայաստանի եւ Իրանի միջեւ՝ նոր շունչ հաղորդելով մեր երկու ժողովուրդների դարաւոր բարեկամական յարաբերութիւններին*»[32]:

1992 Հոկտեմբերի 31ից Նոյեմբերի 2ը ՀՀ պետնախարար Վահան Չիթեչեանը բանակցում է Արեւելեան Ատրպատականի նահանգապետի խորհրդատու Շահամաթի հետ: Իրանական կողմը պատրաստակամութիւն է յայտնում կազմակերպելու պարենամթերքի եւ ուժանիւթի, ապրանքափոխանակութիւն: ԻԻՀն կարող էր ՀՀ ուղարկել օրական 200 տոննա ալիւր[33]: Արտահանման ապրանքների ցուցակը յանձնւում է իրանական կողմին, որը հետաքրքրուած էր պարենի, էլեկտրասարքերի,

բնափայտի, մետաղների, ցեմենտի, հաղորդալարերի եւ այլ ապրանքների գներով: Իրանական կողմը համաձայն էր 15 օրը մէկ 1000 տոննա մազութ մատակարարել ՀՀ: Նոյեմբերի 1ին ՀՀ պատուիրակութեանը ընդունում է նահանգապետ Ա. Ալիզադէն, որը հետաքրքրուած էր ՀՀի հետ առեւտրական կապերի զարգացմամբ:

Դեկտեմբերի 22-25ը ԻԻՀ մեկնած ՀՀ փոխնախագահ Գագիկ Յարութիւնեանը բանակցութիւններ է վարում ԻԻՀի ղեկավարութեան հետ[34]: Յարութիւնեանը եւ Մոհսէն Նուրբախշը ստորագրեցին ՀՀի պատուիրակութեան այցի արդիւնքների մասին արձանագրութիւն, որով հաստատեցին ՀՀի եւ ԻԻՀի միջեւ մինչ այդ ստորագրուած 21 փաստաթղթերի - այդ թւում՝ մաքսային եւ առեւտրատնտեսական պայմանագրերի - գործադրելիութիւնը: Կողմերը պայմանաւորուեցին վառելանիւթի եւ հացահատիկի փոխադրման սկզբունքների շուրջ:

Դեկտեմբերի 25ին Թաւրիզում Արեւելեան Ատրպատականի նահանգապետ Աբդուլ Ալիզադէն եւ ՀՀ տրանսպորտի նախարար Հենրիկ Քոչինեանն ու ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Միրոն Շիշմանեանը ստորագրեցին գործակցութեան պայմանագիր[35]: Պայմանագրով նահանգապետարանը Էնզելի նաւահանգստում ընդունելու էր ՀՀին պատկանելիք ամսական 35 հազար տոննա ցորեն եւ այն վերածելով ալիւրի, Ջուլֆայում յանձնելու էր ՀՀին: Թաւրիզում կազմուած յանձնախումբը ճշտելու էր հացահատիկ աղալու եւ դրա փոխադրման ծախսերը, վճարման ձեւերը: Երկրորդ յօդուածով ՀՀն 35,000 տոննա մազութ (5 օրը մէկ 2500 տոննա տարողութեամբ նաւթ) յանձնելու էր նահանգապետարանին՝ Կասպից Ծովի Էնզելի կամ այլ նաւահանգստում՝ սկսած 1993 Յունուարի 15ից: Նահանգապետարանը բեռը ստանալուց 2 օր անց, ՀՀին պէտք է յանձնէր օրական 200-300 տոննա մազութ Ջուլֆայում: Փաստօրէն ԻԻՀն ստանձնեց կենսապահովման առաջին միջոցների մատակարարման գործը ՀՀին:

1992 Դեկտեմբերի 22ին Թեհրանում պաշտօնապէս բացուեց ՀՀ դեսպանութիւնը: ՀՀի դեսպանութեան բացումից յետոյ աւելացաւ առեւտրական գործակցութեան առաջարկներով դեսպանատուն այցելողների թիւը: Նրանք առեւտրագնման տարբեր կազմակերպութիւնների, պետական եւ մասնաւոր հատուածի ներկայացուցիչներ ու միջնորդներ էին: Սակայն դեսպանութիւնը չունէր ՀՀի ձեռնարկութիւնների հասցէներն ու ցանկը, արտադրատեսականին ու գնացուցակները[36]: Առաջարկում էին ՀՀից ներածել հումք, ցեմենտ, մետաղ, փայտանիւթ, քիմիական արտադրամիջոցներ, կենցաղային ապրանքներ, էլեկտրական սարքաւորումներ, մեքենաշինական արտադրանք եւն.: Դրա դիմաց նրանք առաջարկում էին թանկ գներով մազութ, վառելանիւթ, սննդամթերք, կօշկեղէն եւն.[37]:

Մեղրու ժամանակաւոր կամուրջի սահմանափակ հնարաւորութիւնները, Մեղրի-Երեւան անբարեկարգ ճանապարհը դժուարացնում էին իրան-

ցի գործարարներին հայ գործընկերների հետ կապերի մէջ մտնել, իսկ դրամատնային համակարգի բացակայութիւնը վանում էր նրանց մեծ ծաւալի գործարքներ կնքելուց: Այդ պատճառներով շատ ձեռներէցներ, օգտուելով ՀՀի տնտեսական ծանր իրավիճակից, ցանկանում էին էժան գներով ձեռք բերել սարքաւորումներ ու արտադրանք, որոնք շրջափակման հետեւանքով մնացել էին գործարանների պահեստներում: Որոշ գործարաններ, սեփական շահերից ելնելով, միջազգային գներից բաւականին ցածր վճարով ԻԻՀ էին առաքում այնպիսի արտադրատեսակներ, որոնց կարիքը զգացւում էր նաեւ ՀՀում:

Իրանցի գործարարները ԱՊՀ շուկայից ՀՀի միջոցով ցանկանում էին ներածել մեքենաշինական, կենցաղային, սարքաշինական արտադրանք, իսկ ԱՊՀ շուկայ արտահանել իրանական ապրանքներ, վառելիք, չոր մրգեր եւն.[38]: ՀՀ դեսպանութեան տնտեսական հարցերով պատասխանատուի եւ անհրաժեշտ ընթացակարգերի բացակայութիւնը դժուարացնում էին ստորագրուած համաձայնագրերը կեանքի կոչելը:

Տնտեսական գործակցութիւնից զատ կարեւոր նշանակութիւն ունէին **Իրանի հայ համայնքի մասնաւոր նուիրատուութիւնները** հայրենիքին: Դեռեւս Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնութեան նպատակով 1988 Դեկտեմբերի 15ին Երեւան ուղեւորուեց բեռնաւորուած օդանաւը եւ նոյն թռիչքով Երեւան մեկնեց Արտաւազդ Բաղումեանը, իսկ Դեկտեմբերի 21ին՝ Վարդան Վարդանեանը՝ անձամբ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին յանձնեց 100,000 դոլարի չէք[39]: 1992 Դեկտեմբերի 31ին իրանահայ Հարմիկ Յովնանեանի եւ նրա ընկերակիցների միջոցով որպէս նուիրատուութիւն ՀՀ է ուղարկւում 50 տոննա **ալիւր**, իսկ 1993 Յունուարին եւս 50 տոննա ալիւր եւ որոշակի քանակութեամբ **բենզին**: Նուիրատուութեան հարցում անմասն չէին իրանահայ հոգեւոր կառոյցները: 1991ից սկսած Իրանի Հայ Աւետարանական Եկեղեցին նիւթական աջակցութիւն է ցուցաբերում ՀՀի առանձին կառոյցների[40]: Թեհրանի հայոց թեմի թեմական վարչութիւնը 1993 Յունուարի 11ին Թաւրիզից Մեղրի է ուղարկում 500 տոննա ալիւր եւ 100 տոննա ածուխ, այնուհետեւ եւս 5500 տոննա ալիւր, 60 տոննա արմաւ եւ 20 տոննա պահածոներ[41]:

Հայրենիքին օգնելու հարցում իր մասնակցութիւնը ունեցաւ նաեւ ԱՄԷի հայ համայնքը, որի հանգանակած 21,000 դոլարով ՀՀ գործերի հաւատարմատար Բայբուրդեանը 100 տոննա ալիւր գնեց եւ ուղարկեց ՀՀ[42]: 1993 Յունուար-Փետրուարին իրանահայ համայնքի հանգանակած միջոցներով (18,900 դոլար) ՀՀ ուղարկուեց 90 տոննա ալիւր[43]: Պատգամաւորական ժողովի առաջարկով Թեմական Խորհուրդը 1993ին ՀՀին օգնութիւն յատկացնելու համար Ահարոնեանի պատասխանատուութեամբ շտապ օգնութեան յանձնաժողով ստեղծեց, որը 30 մլն. ռիալ հաւաքեց: Գնուած մթերքը Իրանի Կարմիր Մահիկի օգնութեամբ տրամադրուած երկու օդանաւերով փոխադրուեցին ՀՀ: Յաջորդ օգնութեամբ Նորայր Մել-

քումեանը հաւաքեց 6 մլն. ռիալ, որով սննդամթերք գնեց եւ Թեմական Խորհրդի անդամների միջոցով Մեղրիի ու Ագարակի շրջաններում բաժանեց[44]: Յիշարժան է նաեւ թեհրանահայ Գարեգին Փիրզադեանը, որ Դեկտեմբեր 1994ին «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին յատկացրեց 25,000 դոլար եւ 11,000 անգլ. ստերլինգ[45]:

ՀՀի տնտեսութիւնը շարունակում էր մնալ կաթուածահար: 1992 Դեկտեմբերի 12ին ՀՀի ԱԳՆն Մոսկուայում գտնուող Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրների դեսպանութիւններ է ուղարկում ՀՀի նախագահի 'Արտակարգ դիմումը'՝ աշխարհի բոլոր ժողովուրդներին ու պետութիւնների ղեկավարներին[46]: Դիմումում կոչ էր արւում պարեն եւ մազութ հասցնել ՀՀ: Մարդասիրական օգնութիւն ստանալու նպատակով ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանը հեռախօսազրոյց է ունենում ԻԻՀի էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարար Նուրբախշի հետ, որը յանձնարարել էր իր տեղակալ Բիաբանիին՝ զբաղուելու այդ խնդրով: 1993 Փետրուարի 17ին Բիաբանին Բայբուրդեանին յայտնում է, որ ԻԻՀի կառավարութիւնը հայ համայնքի միջոցներով ձեռք է բերել 1000 հատ 'Ալադին' տիպի վառարան եւ նաւթ, որը որպէս պետական օգնութիւն պէտք է ուղարկուի ՀՀ: Վառարանները ուղարկուեցին դպրոցականներին Թեհրան տեղափոխող ինքնաթիռով, իսկ նաւթն ուղարկուեց Թաւրիզից:

1993 Յունուարի 13ին ՀՀի փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Հրանտ Բագրատեանի հրաւիրած խորհրդակցութիւնում քննարկւում է ՌԴի Մախաչկալա եւ Թուրքմէնստանի Կրասնովոդսկ նաւահանգիստներից ԻԻՀի Էնզելի նաւահանգիստ **ցորենի, նաւթամթերքի** եւ այլ պարենային ու արդիւնաբերական ապրանքների փոխադրման կազմակերպական հարցեր: Նախատեսւում էր առաջին 3000 տոննա վառելանիւթը հասցէագրել Մախաչկալա մինչեւ Յունուարի 23ը[47]: Փաստօրէն ղարաբաղեան պատերազմի տարիներին ՀՀն առեւտուր անելու փորձ ձեռք բերեց ՌԴի եւ Թուրքմէնստանի հետ՝ ԻԻՀի միջոցով:

1993ին տեղի ունեցան մի շարք այցեր[48], որոնք տնտեսական կապերի խորացման գործում ունեցան կարեւոր նշանակութիւն:

ԻԻՀ-ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄՏԱՀՈԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1990ականների սկզբներին ԻԻՀ-ՀՀ տնտեսական յարաբերութիւններում կային մտահոգիչ երեւոյթներ: 1993 Ապրիլի 9ին ՀՀի գործերի հաւատարմատար Բայբուրդեանը դիմում է ԱԳի նախարար Վահան Փափազեանին հրատապ հարցերով[49]: ՀՀից ապրանքների հոսքը ԻԻՀ գերազանցում էր ԻԻՀից ՀՀ ներմուծուած ապրանքների քանակը, ինչը աղէտալի հետեւանքներ ունէր նորանկախ ՀՀի համար: Մասնաւոր անձանց կողմից ՀՀ տնտեսութեանը պատճառւում էր զգալի վնաս. տեղի էր ունենում ոչ թէ տնտեսական, այլ ՀՀն կողոպտելու, նրա ունեցածը գնելու եւ դուրս տանելու մրցակցութիւն: Բերենք միքանի փաստեր.-

ա. ԻԻՀից ՀՀ եկած վաճառականները արտահանութեան համար ապրանքներ էին ձեռք բերում ռուբլով եւ ոչ թէ տարադրամով, որն անթոյլատրելի էր, քանզի այդ ճանապարհով հարստութիւնը երկրից հոսում էր դուրս: Շատերը ԻԻՀից ապրանքներ էին արտահանում ԱՀ, այնտեղ վաճառում եւ ձեռք բերած ռուբլով ՀՀում գնում բազմապիսի ապրանքներ, արտահանում ԻԻՀ կամ այնտեղից այլ երկրներ: Օտարերկրեայ վաճառականները ՀՀի հետ պէտք է առեւտուր անէին ապրանքափոխանակութեան սկզբունքով կամ տարադրամով, բայց ոչ մի դէպքում ռուբլիով:

բ. ԻԻՀից ՀՀ բեռն ուղարկողը անմիջապէս ՀՀ մուտքի վիզայով յայտնւում էր ՀՀ, ստանում իր իսկ ուղարկած բեռը եւ այն վաճառում իր ուզած գնով, ում որ ցանկանայ: Սա ոչ միայն կեղծիք էր, այլեւ՝ կողոպուտ: Դրա հետեւանքով գներն արհեստականօրէն բարձրանում էին:

գ. Արտահանութեան համար ՀՀում վաճառուող ապրանքների գները կայուն չէին, այսինքն՝ միեւնոյն ապրանքն օտարերկրեայ առեւտրականներին վաճառւում էր տարբեր գներով: Եղել են դէպքեր, երբ վաճառուել է իր իրական արժէքի ընդամէնը քառորդին համապատասխանող գնով: Իրանցի գնորդները յապաղում էին հայկական ապրանքներ գնել՝ ենթադրելով, որ առաջիկայում այդ նոյն ապրանքները կարելի կը լինի ձեռք բերել աւելի էժան: Սրա հետեւանքով ՀՀի ապրանքային շուկայի նկատմամբ անվստահութիւն էր առաջանում: Այս գործողութեան հիմքում անբարեխիղճ մարդկանց անձնական շահն էր, որոնք իրենց մէկ կոպէկի համար քամուն էին տալիս ժողովրդի հազարը:

Կարեւոր է նշել նաեւ, որ իրանական մաքսատունը այդ ապրանքները գնահատում էր միջազգային կամ իր շուկայի գներով, մինչդեռ հայ վաճառականները վաճառում էին 'ինչ գնով, որ պատահի' սկզբունքով: Անհրաժեշտ էր նախ ճշտել ապրանքների միջազգային միջին արժէքները՝ հաշուի առնելով նաեւ հայկական ապրանքների որակը, մրցունակութիւնը եւ ըստ այնմ որոշել նրա գինը: Իհարկէ, գնագոյացման աննշան տարբերութիւններ հնարաւոր էին, բայց որ միեւնոյն ապրանքը վաճառուի գնային տասնապատիկ արժէքով՝ բնական չէր:

դ. Իրանցի գործարարները ՀՀի գործարաններից գնում էին հաստոցներ, սարքեր եւն., դրանք վերավաճառում կամ դուրս բերում ՀՀից: Բոլոր գործարանները քանդում, աւերում եւ վաճառում էին: Առհասարակ, չպէտք է թոյլատրուէր պետական սեփականութեան որեւէ սարքի արտահանումը, իսկ մասնաւոր անձանց պատկանող սարքաւորումների վաճառքի նպատակով արտահանումը պէտք է ենթարկուէր պետական հսկողութեան:

ե. ՀՀի կողմից վաճառուող պղնձի եւ մոլիբդէնի խտանիւթը եւս գնում էին միայն իրանցի վաճառականները: Այս ոլորտում առկայ սխալը գալիս էր հայկական կողմից: Իրանական կողմը օգտւում էր պատեհ առիթից:

զ. ՀՀ մտնող եւ դուրս եկող ապրանքները չունէին օրինական արժէքաւորուած փաստաթղթեր:

է. ԻԻՀ արտահանուող ապրանքների փաստաթղթերում գրում էր միայն ապրանքի կշիռը, որը սխալ էր: Պէտք է գրուէին ապրանքի զուտ եւ կշիռները, այլապէս կրկին բացում էր կեղծիքներ կատարելու հնարաւորութիւն: Հաստոցներ եւ մեքենաներ վաճառելու դէպքում դրանց նմուշօրինակ մանրամասների ու յարմարանքների անուան տակ յաճախ բերում էին միանգամայն այլ ապրանքներ: Փաստաթղթերում յաճախ չէր նշում հաստոցի կամ սարքաւորման անունը, քանակը, կշիռը:

ը. Բարուօք չէր վիճակը նաեւ մաքսային ոլորտում: ԻԻՀի մաքսատները Հինգշաբթի եւ Ուրբաթ օրերը չէին աշխատում, իսկ ՀՀի մաքսատները՝ Շաբաթ եւ Կիրակի: Ստացում էր, որ ապրանքափոխանակութիւն կարող էր կատարուել շաբաթական միայն երեք օր: Սա անբնական երեւոյթ էր, եւ իրանական կողմը դժգոհում էր[50]:

Արդիւնաբերական ձեռնարկութիւնները սեփականաշնորհելիս դրանց ունեցուածքի պահպանման ուղղութեամբ, բաւարար չափով հոգ չտարուեց, որի հետեւանքով մետաղեայ թանկարժէք, այդ թւում նորագոյն սարքաւորումները, ջարդօնի անուան տակ, վաճառուեցին ԻԻՀում: Դա ծանր հարուած հասցրեց տնտեսութեանը[51]:

Կողմերի միջեւ կնքուած պայմանագրով 1993 Յունիսի 21-28ը Երեւանում տեղի ունեցաւ ԻԻՀի արտադրանքի ցուցահանդէս[52], իրանական 60 ընկերութիւնների մասնակցութեամբ[53]: Ի պատասխան այս ցուցահանդէսի նոյն թուականի Օգոստոսի 21-27ը Թեհրանում տեղի ունեցաւ ՀՀի արտադրանքի առաջին ցուցահանդէսը, ՀՀ 53 ձեռնարկութիւնների մասնակցութեամբ[54]: Օգոստոսի 21ին ՀՀի արդիւնաբերութեան նախարար Աշոտ Սաֆարեանը այցելեց ԻԻՀ: Ղարաբաղեան հակամարտութեան թէժ պահին Թեհրանում ՀՀի ցուցահանդէսի կազմակերպումը արտառոց երեւոյթ էր: Հասարակական շրջանակները կարծում էին, որ իրանական կողմը թոյլ չի տայ այն բացելու: Ցուցահանդէսի աշխատանքները լուսաբանում էին՝ չբորբոքելով աւելորդ կրքեր: Այնուհանդերձ տեղի էր ունեցել միջադէպ մի ադրբեջանցու հետ, որին ոստիկանութիւնը մեկուսացրել էր[55]: Ստորագրուեցին աւելի քան 20 համաձայնագրեր:

Տնտեսական յարաբերութիւնների զարգացմանը նպաստեց 1992 Նոյեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծուած **հայ-իրանական կապերի համաձայնեցման յանձնաժողովը**, որի նախագահն էր Գագիկ Յարութիւնեանը, փոխնախագահը՝ Թելման Տէր Պետրոսեանը: 1993 Յունիսի 3ին յանձնաժողովը քննարկում է կամրջաշինութեան, գազատարի կառուցման նախագծի, ՀՀ ներածուած եւ մեծ պահանջարկ ունեցող աղբիւրների էժան գներով ՀՀից արտահոսքի հարցեր[56]: Յանձնաժողովը որոշում է առաջարկել ՀՀ կառավարութեանը՝ դադարեցնել մետաղների, ջարդօնների, ՀՀում չարտադրուող քիմիական նիւթերի արտահանման արտօնագրերի տրամադրումը եւ դրանց ու ներմուծուած սարքաւորումների ՀՀից արտահանումը մինչեւ կառավարութեան կողմից հարցի կարգա-

տրումը: Նիստերին մշտապէս մասնակցում էր ՀՀում ԻԻՀի գործերի հաւատարմատարի տեղակալ Մոհամմադ Ֆարհադ Քոլէյնին: Յունիսի 17ին յանձնաժողովը քննարկում է մազութի եւ ալիւրի ներկրման, գազատարի շինարարութեան եւ սահմանային առեւտրի կազմակերպման հարցերը[57]: Յուլիսի 8ի նիստում քննարկում են պարենային հարցեր: Ալիւրի եւ մազութի առաքման հարցերով Թաւրիզ էին մեկնել Սուրէն Լազարեանը եւ Գառնիկ Բաղալեանը: ԻԻՀի գործերի հաւատարմատար Ահմադ Սոբհանին ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանին Յուլիսի 8ին յայտնում է, որ Արեւելեան Ատրպատականի փոխնահանգապետ Խաթիբին ցանկութիւն է յայտնել Յուլիսի 24ին այցելել ՀՀ՝ մազութի, ալիւրի եւ այլ հարցերի շուրջ բանակցութիւններ վարելու համար[58]:

ՀՀ Էներգետիկայի ու Վառելիքի նախարարութեան եւ Թեհրանի Հայ Կաթողիկէ Եկեղեցու միջեւ կնքուած պայմանագրով ՀՀ պէտք է արտահանուէր իրանական մազութ: 1993 Սեպտեմբերի 30ին յանձնաժողովը որոշում է հաւանութիւն տալ այդ պայմանագրի իրականացմանը: Իսկ Թեհրանի 19րդ միջազգային ցուցահանդէսին որոշում է չմասնակցել, քանզի մէկ ամիս առաջ հայկական կողմը Թեհրանում կազմակերպել էր ցուցահանդէս եւ շուտով մասնակցելու էր ԱՄԷի ցուցահանդէսին:

1993ին ՀՀին սպառնում էր պարենի պակասը: Այդ նպատակով Հոկտեմբերի 25ին Բագրատեանը հանդիպում է ԻԻՀի գործերի հաւատարմատար Սոբհանիին[59]: ՀՀ փոխադրուելիք հացահատիկի մեծ մասը կուտակուել էր Բաթում նաւահանգստում, որը ՀՀ տեղափոխելու համար խոչընդոտում էր Վրաստանի ներքին իրավիճակը: Հայկական կողմը խնդրում էր, որ ԻԻՀի կառավարութիւնը ՀՀին յատկացնի 10-20,000 տոննա ալիւր՝ հատուցումը ալիւրով՝ 1-1,25 յարաբերութեամբ: Տրանսպորտային ծախսերը ՀՀն վերցնում էր իր վրայ: Սոբհանին նշում է, որ ԻԻՀը պատրաստ է գործակցել, եւ ՀՀն կարող է օգտագործել ԻԻՀի տարածքը:

Տնտեսական գործակցութեան համար նպաստաւոր չէր ՀՀ կառավարութեան արտաքին առեւտրի ազատական ռեժիմի քաղաքականութիւնը, որը թերեւս ժամանակավրէպ էր: Գործում էին արտահանման տարիֆային կարգաւորում չունեցող ՀՀի կառավարութեան 1993-95ի որոշումները: ՀՀի կառավարութեան 1995 Յունուարի 17ի որոշմամբ վերացուեցին արտահանման-ներմուծման արտօնագրերն արտահանուող եւ ներմուծուող բոլոր ապրանքների (բացառութեամբ դեղամիջոցների եւ պաշտպանական նշանակութիւն ունեցող արտադրանքի) նկատմամբ[60]:

Հաշուի առնելով մետաղների արտահանման նկատմամբ պետական հսկողութեան անհրաժեշտութիւնը՝ պայմանաւորուած ներքին շուկայական ցածր պահանջարկով եւ ապրանքները միջազգային գներից աւելի ցածր գներով արտահանումը կանխարգելու նպատակով, որպէս սահմանափակիչ միջոց պահպանուեց հարկացուցակի կարգաւորման մէկ այլ ձեւ՝ մետաղների արտահանման համար հսկիչ գների սահմանումը:

ՀՀից գունաւոր մետաղների (ջարդօն եւ թափօն) արտահանման ծաւալը 1994ին կազմել է 2870 տոննա (այդ թւում՝ ԼՂՀից ներմուծուած տարանցիկ 60 տոննա)՝ 1,782,000 դոլար ընդհանուր գումարով՝ 1993ին՝ 1,112,000 դոլար՝ 1813 տոննայի դիմաց[61]: Այլ կերպ ասած՝ 1993ին 1 տոննան վաճառուել է 613 դոլարով, իսկ 1994ին՝ 621 դոլարով: Թանկացումը 1993ի համեմատ 1994ին կազմել է ընդամէնը 1%: 1994ին արտահանուել է 370 տոննա գունաւոր մետաղ եւ 2534 տոննա սեւ մետաղ: Սեւ մետաղների արտահանման ծաւալը 1994ին կազմել է 18513 տոննա (այդ թւում ԼՂՀից ներմուծուած տարանցիկ 2939 տոննա)՝ 1,382,000 դոլար ընդհանուր գումարով 1993ին 329,000 դոլարի՝ 4700 տոննայի դիմաց[62]: Այսպիսով, ՀՀից մետաղների ընդհանուր արտահանման ծաւալը 1994ին կազմել է 3,164,000 դոլար՝ 1993ին՝ 1,441,000 դոլարի դիմաց:

Այսպիսով, 1992-94՝ աստիճանաբար ձեւաւորուեց ՀՀ-ԻԻՀ միջպետական տնտեսական գործակցութիւն, որն ունէր բազմաթիւ բացթողումներ: Շնորհիւ ԻԻՀի խոհեմ ղեկավարութեան նա չենթարկուեց քաղաքական գործընթացների ազդեցութեանը, թէեւ լիովին այդ բացառելը սխալ կը լինի: Առաջացած խնդիրները լուծելու համար հայկական կողմին կոչ անելով ՀՀ-ԻԻՀ տնտեսական գործակցութեան մասին բացայայտ քարոզչութիւն չանել՝ իրանական կողմը խուսափում էր ԱՀի հակահիրանական քայլերից: Միաժամանակ ԻԻՀն իր տնտեսական ներկայութիւնն էր ապահովում ՀՀում: Գնահատելի է, պարենամթերքի եւ առաջին անհրաժեշտութեան այլ ապրանքների ներմուծման հարցում իրանական աջակցութիւնը:

Ինչ վերաբերում է ՀՀից ԻԻՀ կատարուած արտահանումներին, ապա պէտք է նշել, որ հարեւան Իրանի հետ նախ չունենալով առեւտրական յարաբերութիւնների երկարատեւ փորձառութիւն եւ գործակցութեան լայն շրջանակներ, խնդրոյ առարկայ ժամանակահատուածում յաճախ նկատուած չարաշահումները, պետական ունեցուածքի անզուսպ եւ էժան գներով մեծածաւալ վաճառքը, յիրաւի, անթոյլատրելի էր եւ մեծ ու անդառնալի վնաս էր հասցնում նորանկախ երկրի տնտեսութեանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՈՒԺԱՆԻԹԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՀի եւ ԻԻՀի միջեւ ձեւաւորուած տնտեսական գործակցութիւնը շարունակուեց եւ ընդգրկեց նոր բնագաւառներ. խիստ կարեւոր էր ՀՀ-ԻԻՀ ուժանիւթի գործակցութիւնը, որը կարելի է համարել ժամանակի պահանջ:

Ուժանիւթի գործակցութիւնը մշտապէս եղել է կողմերի ուշադրութեան կենտրոնում: 1992 Փետրուարի 8-10ը՝ Իսլամական Յեղափոխութեան 13րդ տարեդարձի օրերին, ՀՀ ԱԳ նախարար Յովհաննիսեանը առաջինը պաշտօնական այցով ժամանեց ԻԻՀ: ՀՀ պատուիրակութիւնը ԻԻՀի ուժանիւթի նախարար Աղազադէի հետ քննարկում է գազամուղ անցկացնելու, մազութի մատակարարման եւ Մեղրիում համատեղ նաւթամշակ-

ման գործարան կառուցելու հարցերը[63]: Հանդիպմանը մասնակցում էր ԻԻՀի խորհրդարանի հայազգի պատգամաւոր եւ ուժանիւթի յանձնախմբի անդամ Բաղումեանը: Նա աշխատում էր նաեւ յատուկ յանձնաժողովում, որը նպատակ ունէր առեւտրական կապեր հաստատել ՀՀի հետ: Դեռ 1991 Մայիսի կէսերին յայտնի էր այդ յանձնաժողովի մասին[64]:

Թեհրանում տեղի ունեցած երկկողմ բանակցութիւններից պէտք է եզրակացնել, որ իրանական կողմը պատրաստ լինելով բոլոր բնագաւառներում գործակցել եւ սահմանափակումներ չդնել ՀՀի հետ, ինչ որ տեղ, իսկապէս, ոգեւորուած էր եւ անկեղծ: Յիրաւի, սա ՀՀ-ԻԻՀ յարաբերութիւններում ամենաջերմ եւ անկեղծ մթնոլորտում տեղի ունեցած բանակցութիւններն էին, որոնք ապագայի հանդէպ ունէին մեծ սպասելիքներ եւ ակնկալիքներ:

Տնտեսական կապերի զարգացման գործում կարեւոր էր 1992 Դեկտեմբերի 22-25ը ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանի այցի ընթացքում[65] ԻԻՀի ղեկավարութեան հետ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները[66]: Իրանական կողմը համաձայնեց, որ ՌԴից ԻԻՀի Էնզելի նաւահանգիստ հասցրած վառելանիւթը եւ հացահատիկը ԻԻՀի տարածքով տեղափոխուի ՀՀ: 1993 Յունուարի 29ին ԻԻՀից ՀՀ մտաւ վառելանիւթի առաջին խմբաքանակը[67]:

Թեհրանում մի շարք պայմանագրեր ստորագրուեցին, որոնցից կարեւորը ԻԻՀից ՀՀ գազատար անցկացնելու ծրագիրն էր: Կնքուած պայմանագրի համաձայն գազամուղի երկարութիւնը կազմելու էր 140 կմ: Նախատեսւում էր տարեկան ԻԻՀից ՀՀ ներմուծել 1 մլրդ մ^3 գազ: Այդ ենթահողում քննարկւում էր ԻԻՀ-ՀՀ ճանապարհով տարանցիկ բեռների տեղափոխման հարցը, որը ՀՀում ԻԻՀի գործերի հաւատարմատարի տեղակալ Քոլէյնին յանգեցնում էր Մետաքսի Ճանապարհի ծրագրի իրագործմանը[68]: ԻԻՀի կառավարութիւնը գազամուղի վերաբերեալ տուել էր դրական պատասխան: Որոշուել էր, որ գազատարի կառուցման ծախսերն իր վրայ վերցնի հայկական կողմը: ՀՀ պետնախարար Սեպուհ Թաշճեանը յայտնել էր, որ հայկական կողմը պատրաստ է սկսելու աշխատանքները: Իրանական կողմը խնդրում է հայկական կողմին արագացնել գազատարի շինարարութեան դրամական հարցով բանակցութիւնները[69]: Սակայն տուեալ պահին անհրաժեշտ գումարը բացակայում էր:

1993 Մայիսի 5ին ԻԻՀի Ազգային Գազի Ընկերութիւնը յայտնում է, որ գազամուղի կառուցման եւ գազի գնի վերաբերեալ կնքուելիք պայմանագրերը կարիք ունեն աշխատանքների կատարման մեթոդների՝ եղանակների հետ կապուած ուսումնասիրութեան, որի համար պահանջւում է մօտ մէկ տարի ժամանակ[70]: Ուստի, պայմանագրի կնքումը մէկ ամսուայ ընթացքում՝ անհաւանական էր համարւում: Իսկ Օգոստոսի 17ին իրանական կողմը յայտնում է, որ որպէս կանխավճար կը

տրամադրի 130,000 դոլար ԻԻՀի տարածքում գազամուղի կառուցման հետազօտական աշխատանքների ծախսերի համար[71]:

Սեպտեմբերի 20-25ը Թեհրանում Իրանի Գազի Ազգային Ընկերութեան տնօրէն Ռեզա Ռոսթոմի Սանին եւ ՀՀ էներգետիկայի նախարար Կ. Կարէն Գալուստեանը պայմանաւորուեցին, որ ՀՀի փոխարէն ԻԻՀն վճարի նախագծային աշխատանքների ծախսերը[72]: Փոխանակուեց գազի առուվաճառքին վերաբերող պայմանագրի նախագիծը: Կողմերը ստորագրեցին գազամուղի շինարարութեան վերաբերեալ արձանագրութիւն, որի 12րդ յօդուածում հայկական կողմը առաջարկում էր աւելացնել մատակարարուող գազի ծաւալը եւ երկարացնել տարեկան ժամանակացոյցը: Իրանական կողմը իրագործելի էր համարում այդ առաջարկը: Սակայն այս բանակցութիւններին ԻԻՀ ԱԳՆից ոչ ոք չէր մասնակցում: Այդ փաստը եւ ՀՀի պատուիրակութեան այցի նկատմամբ Երեւանում ԻԻՀի դեսպանութեան սառը վերաբերմունքը վկայում էր, որ ԻԻՀի գործադիր մարմիններում տիրում էր ոչ-բարեացակամ մթնոլորտ, որը պայմանաւորուած էր Լեռային Ղարաբաղի ճակատում ընթացող ռազմական գործողութիւններով:

1994 Յունուարի 23-30ը ՀՀ պատուիրակութիւնը Թեհրանում քննարկեց գազատարի առուվաճառքի պայմանագրի կէտերը: Մարտի սկզբներին պէտք է աւարտուէին քննարկումները եւ ստորագրուէր պայմանագիրը: Սակայն այն ձգձգուեց: Օգոստոսի 21-28ը ՀՀ պատուիրակութիւնը Թեհրանում բանակցեց Իրանի Ազգային Գազի Ընկերութեան հետ[73]: Տարեկան պայմանագրային քանակութիւնն ընդունում է 738 մլն մ³: Հայկական կողմը առաջարկում էր վերանայել ութ ամսում օրական 3 մլն մ³ գազ մատակարարելու եւ պայմանագրի ժամկէտի մասին՝ 15 տարուայ, կէտերը[74]: Իրանական կողմը համաձայն էր աւելացնելու ե՛ւ օրական ծաւալները, ե՛ւ երկարացնելու տարուայ մէջ մատակարարումների ժամանակաշրջանը, ե՛ւ առաքման կէտում 34 բարից բարձր պահելու գազի ճնշումը: Սակայն նախագծի ֆինանսաւորման համար պէտք է բանակցէին Համաշխարհային Դրամատան հետ:

1994 Մայիսի 12ին Լեռային Ղարաբաղում հաստատուած զինադադարը զարգացման նոր հնարաւորութիւններ ընձեռեց տնտեսական կապերի ծաւալման համար: Նոյն թուականի Մայիսի 16-18ը ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանը Սիւնիքում Արեւելեան Ատրպատականի նահանգապետի հետ քննարկում է սահմանամերձ առեւտրի, սահմանային անցման, սահմանապահ ծառայութեան աշխատանքների, հայ-իրանական կապերի յանձնաժողովների համատեղ նիստի նախապատրաստական աշխատանքների, Մեղրիում մաքսային համալիրի շինարարութեան, Արեւելեան Ատրպատականի եւ Արդաբիլի նահանգապետերին ՀՀ հրաւիրելու հարցերը[75]: Նշուած հարցերին յանձնաժողովը անդրադառնում է Յունիսի 23ի[76] եւ Օգոստոսի 30ի[77] նիստերում: Որոշում է Սեպտեմբերի 2ին Մեղրի

գործուղել «Հրազդանմեքենայ» արտադրական միաւորման գլխաւոր տնօրէն Թելման Տէր Պետրոսեանի գլխաւորութեամբ պատուիրակութիւն՝ մասնակցելու սահմանամերձ առեւտրի բացման արարողութեանը:

Օգոստոսի 12-16ը ՀՀ պատուիրակութիւնը մասնակցեց Թաւրիզի միջազգային ցուցահանդէսին, իսկ Սեպտեմբերի 8-18ը Երեւանում տեղի ունեցաւ ԻԻՀի արդիւնաբերական ապրանքների 2րդ ցուցահանդէսը, որին մասնակցեցին 94 ընկերութիւններ: Բացմանը ներկայ եղան ԻԻՀի առեւտրի փոխնախարար Բահադորանին եւ ՀՀ փոխնախագահը:

Չնայած վերոնշեալին՝ մասնաւոր զրոյցներում տնտեսական կապերի զարգացումը շաղկապւում էր Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական լուծմանը: 1994 Սեպտեմբերի 25ին Բայբուրդեանը հանդիպեց ԻԻՀի խորհրդարանի իսլամական առաջնորդութեան յանձնաժողովի նախագահ, ազդեցիկ հոգեւորական հոջաթ-օլ-էսլամ Ռ. Թաղաւիին: Վերջինս նշեց. *«Քանի դեռ գովելի լաւատեսութիւնը պայմանագրային փաստաթղթերով չի ամրապնդուել, աւելի հեռանկարային են մշակութային կապերի զարգացումը, քանի որ տնտեսական հարցերը առնչւում են քաղաքականութեանը»*[78]: Իրանական կողմը ակնարկում էր, որ տնտեսական գործակցութեան ոլորտում չպէտք է ակնկալել նորը: Դեռ աւելին, կային որոշ խնդիրներ. օրինակ՝ 1994 Հոկտեմբերի 26ի դրութեամբ երկու տարուայ ընթացքում ՀՀի գործերի հաւատարմատար Բայբուրդեանը չէր հրաւիրուել մասնակցելու Իրան-Հայաստան կապերի յանձնաժողովի նիստերից թէկուզ մէկին[79]: Նախկինում հայկական կողմը նման առաջարկով հանդէս էր եկել, սակայն իրանական կողմը ուշադրութիւն չէր դարձրել:

Նոյեմբերի 11ին ԻԻՀի դեսպան Համիդ Ռեզա Նիքքար Էսֆահանին եւ ՀՀ վարչապետ Բագրատեանը քննարկում են տնտեսական յարաբերութիւնները սահմանամերձ առեւտրից ռազմավարական եւ ապագային ուղղուած սերտ գործակցութեան՝ միջկառավարական մակարդակով վերածելու հարցը[80]: Պատահական չէ, որ Նոյեմբերի 25-27ը Թեհրան եւ Քիշ կղզի այցելած ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանը, անդրադառնալով այցի արդիւնքներին, դրանք բնորոշում է որպէս ԻԻՀում քաղաքական նոր իրավիճակի արգասիք[81]: Իրանական կողմը խոստացել էր վերացնել ԻԻՀի տարածքով հայկական աւտոմեքենաների անցման ժամանակ առկայ արգելքները: Իսկ Դեկտեմբերի 20ին ՀՀ դեսպան Բայբուրդեանի հետ զրոյցի ընթացքում ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանին մաղթում է. *«Ղարաբաղեան պատերազմը շուտափոյթ աւարտուի, որ զբաղուենք յարաբերութիւնների ընդարձակմամբ: Մեր յարաբերութիւնները ՀՀի հետ, մեր միւս հարեւան երկրների հետ համեմատած, աւելի ընդարձակ կը լինեն»*[82]: Չնայած ռազամաճակատում հաստատուած հրադադարին, իրանական կողմը շարունակում էր ունենալ որոշ մտահոգութիւններ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ 1990ԱԿԱՆՆԵՐԻ 2ՐԴ ԿԷՍԻՆ

1995 Յունուարի 11ին ՀՀ այցելեց ԻԻՀի տնտեսութեան եւ ֆինանսների նախարար, իրանահայկական կապերի համաձայնեցման միջկառավարական յանձնաժողովի համանախագահ Մորթեզա Մոհամմադխանի գլխաւորած պատուիրակութիւնը: Յունուարի 12ին ՀՀ նախագահի եւ Մոհամմադխանի մասնակցութեամբ բացուեց իրանական «Մելլաթ» բանկի[83] երեւանեան մասնաճիւղը[84]:

Իսկ Յունուարի 11-13ը տեղի ունեցաւ հայ-իրանական եւ Իրան-Հայաստան կապերի յանձնաժողովների Ա. համատեղ նիստը՝ ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանի եւ Մոհամմադխանի գլխաւորութեամբ:

Տեղին է նշել, որ հայ-իրանական կապերի յանձնաժողովը եւ ԻԻՀում ՀՀ դեսպանութիւնը[85] մինչ այդ բազմաթիւ նիստեր եւ հանդիպումներ էին անցկացրել, քննարկելու տնտեսական կապերի խորացման հարցերը[86]:

Յարութիւնեանը եւ Մոհամմադխանը քննարկեցին կնքուած համաձայնագրերի կատարման գործընթացը, քանզի տարիների ընթացքում դրանց մեծ մասը մնացել էր թղթի վրայ: Նպատակայարմար համարուեց պատրաստել առեւտրական նոր համաձայնագիր[87]: Յունուարի 13ին «Հայէներգօ» պետական ձեռնարկութիւնների միաւորումը եւ իրանական «Սանիր» ընկերութիւնը գործակցութեան վերաբերեալ համաձայնութեան եկան: Փաստօրէն Մոհամմադխանի այցն ունեցաւ որոշակի արդիւնքներ:

1995 Մայիսի 3ին Թեհրան մեկնեց ՀՀ վարչապետ Բագրատեանը: Բանակցութիւնների ընթացքում ԻԻՀի փոխնախագահ Հասան Հաբիբին յայտնեց, որ ապրանքաշրջանառութեան ծաւալը երկու երկրների միջեւ չորս տարուայ ընթացքում աւելացել է մօտ 15 անգամ եւ ամռանը Մեղրու հիմնական կամուրջի գործարկումով այդ ցուցանիշը կը կրկնապատկուի[88]: Մայիսի 6ին տեղի ունեցաւ բանակցութիւնների ամփոփիչ փուլը, ստորագրուեցին 15 համաձայնագրեր ու յուշագրեր: ՀՀի եւ ԻԻՀի կառավարութիւնների միջեւ կնքուած առեւտրի համաձայնագրով[89] փոխանակուող ապրանքները կարող էին վերաարտահանուել երրորդ երկրներ:

1995 Մայիսի 6ին կողմերի միջեւ կնքուած գազի առուվաճառքի պայմանագրով՝ նախատեսւում էր օրական 4 մլն մ³ գազի առաքում իւրաքանչիւր տարուայ Մարտի 21ից մինչեւ Նոյեմբերի 21ը, տարեկան 1 մլրդ մ³ ծաւալով: ԻԻՀի տարածքում կառուցուելու էր 100 կմ երկարութեամբ եւ 600 մմ տրամագծով գազատար՝ 36 մլն դոլար ներդրումով: Նախատեսւում էր կառուցել ճնշակայիին կայան՝ 26 մլն դոլար ներդրումով, որից ՀՀի մասնաբաժինը՝ 6 մլն դոլար: ԻԻՀի տարածքում պահանջուող 42 մլն դոլար ներդրումները կատարելու էր հայկական կողմը (որպէս կանխավճար ապագայ գազի դիմաց): ՀՀի տարածքում գազատարի տրամագիծը կազմելու էր 700 մմ, իսկ երկարութիւնը՝ 237 կմ՝ 78,2 մլն դոլար ներդրումով: Ծրագրի ընդհանուր գումարը 120,2 մլն դոլար էր:

1997ի սկզբին աւարտուեցին գազատարի Մեղրի-Քաջարան 40 կմ հատուածի նախագծային աշխատանքները: Ծրագրի իրականացման համար նախատեսւում էր 2,5-3 տարի[90]: Ուշագրաւ է, որ նոյն տարուայ Փետրուարին ԻԳԱԸի տնօրէն Սանին յայտնեց, որ ԻԻՀն ծրագրում է 2000ին 4,5 մլրդ մ³ գազ արտահանել. ՀՀ՝ 1 մլրդ մ³, Թուրքիա՝ 3 մլրդ մ³, Նախիջեւան՝ կէս մլրդ. մ³ [91]: Բայց ՀՀի հետ բանակցութիւնները չարդիւնաւորուեցին անգամ 2000ին:

1995 Սեպտեմբերի 25-30ը ՀՀի արդիւնաբերութեան նախարար Սաֆարեանի գլխաւորած պատուիրակութիւնը[92] հանդիպումներ ունեցաւ ԻԻՀի ուժանիւթի, արդիւնաբերութեան, մետաղների եւ հանքերի նախարարութիւնների ներկայացուցիչների հետ[93]: Իրանական կողմը ՀՀ ձեռնարկութիւնների մասին լայն տեղեկատուութիւն ունէր, որը հնարաւորութիւն էր տալիս յօգուտ իրենց մշակելու եւ իրականացնելու տնտեսական քաղաքականութիւն: Մինչդեռ հայկական կողմը տեղեկատուութիւն չունէր ԻԻՀում գործող հարկային, մաքսային, ձեռնարկութիւնների եւ այլ օրէնքների մասին: ԻԻՀի կառավարութիւնը իրագործում էր ուժեղ հովանաւորչական քաղաքականութիւն, որը դժուարացնում էր հայկական արտադրանքի արտահանումը ԻԻՀ:

ԻԻՀ նաւթաքիմիական ընկերութիւնը համաձայնուեց ՀՀ ներմուծել պենտան պլիւս «Նաիրիտ»ում քացախաթթուի արտադրութեան վերագործարկման համար, որը սկզբում կազմելու էր 5000 տոննա, ապա աճելու էր՝ տարեկան 40,000 տոննայի: ՀՀ լուծիչներ ներմուծելու առաջարկը եւս ընդունուեց: Այդ լուծիչների քանակութիւնը հասնելու էր 2000 տոննայի, տարուայ կտրուածքով՝ 10,000 տոննայի[94]: Կողմերը քննարկեցին նաեւ Սունգունի հանքավայրի հետազօտման, նախագծման եւ կառուցման աշխատանքներում «Հայգունմետգիտնախագիծ» Ինստիտուտի մասնակցութեան հարցը եւ կնքեցին գործակցութեան պայմանագիր[95]:

Տնտեսական կապերում իր ուրոյն տեղն ունէր ԻԻՀ նահանգների հետ գործակցութիւնը: 1996 Յունիսի 24ին ՀՀ դեսպան Բայբուրդեանը հանդիպեց Գիլիանի[96] նահանգապետի խորհրդական Վահդաթիին եւ Գիլիանում միջազգային ցուցահանդէսի պատասխանատու, *Iran Exports* ամսագրի խմբագրակազմի անդամ Մ. Էբրահիմշահին[97]: Նրանք Բայբուրդեանին փոխանցեցին նահանգապետ Թահայիի՝ Էնզելի նաւահանգստում 1996 Օգոստոսի 1ին բացուելիք միջազգային ցուցահանդէսին մասնակցելու հրաւէրը: Շեշտւում է, որ ՀՀի մասնակցութիւնը ցուցահանդէսին բեկումնային քայլ կը դառնայ ՀՀի եւ Գիլիանի նահանգի առեւտրատնտեսական, մշակութային եւ այլ կարգի յարաբերութիւններում: Զրուցակիցները փաստարկներ են բերում, որ Գիլիանի եւ ՀՀի միջեւ առեւտուրը կարող է լինել փոխշահաւէտ, որ *«չպէտք է թոյլ տանք, որ մեր երկրների (ՀՀ-Գիլիան - Կ.Մ.) միջեւ առեւտուրը կատարուի միջնորդաւորուած»*: Խօսքը վերաբերում էր Արեւելեան Ատրպատական նահանգին, որը գտնւում է

ՀՀի եւ Գիլիանի միջեւ: Այն ղարաբաղեան պատերազմի տարիներին յայտնի էր իր հակահայ տրամադրութիւններով: Գիլիանի նահանգապետը մտադիր էր Երեւանում կազմակերպել ցուցահանդէս[98]: 1996 Սեպտեմբերին Երեւանում բացուեց իրանական արտադրանքի ցուցահանդէսը[99]:

1996 Դեկտեմբերի 25-29ը Երեւան այցելեց ԻԻՀ փոխնախագահ Հաբիբիի գլխաւորած պատուիրակութիւնը՝ 60 հոգի: ՀՀ ԱԺ նախագահ Բաբկէն Արարքցեանի հետ հանդիպման ժամանակ երկու երկրների գործակցութեան ձեռքբերումների թւում Հաբիբին յիշատակեց 1994ին Երեւանում ստեղծուած համատեղ տնտեսական յանձնաժողովը, 1995ին Արաքս գետի վրայ կառուցուած կամուրջը, Երեւան-Թեհրան օդային կապը[100]:

ՀՀ ղեկավարութեան հետ հանդիպումների ժամանակ ԻԻՀ Հաբիբին կարեւորեց գազամուղի կառուցումը, հեղուկ գազի վաճառքը ՀՀին եւ նաւթավերամշակման գործարանի կառուցումը ՀՀում[101]: Կողմերը համաձայնուեցին, որ ՀՀի հեղուկ գազի պահանջարկը 5 տարի ժամկէտով ապահովի ԻԻՀն: Պայմանաւորուեցին նաեւ Ագարակում 220 կվտ լարման հզօրութեամբ կայանի կառուցման եւ ֆինանսաւորման մասին[102]:

ՀՀ նախագահ Տէր Պետրոսեանը եւ Հաբիբին ստորագրեցին մի շարք փաստաթղթեր՝ ԻԻՀից ՀՀ գազի առաքման եւ ֆինանսաւորման, ՀՀ արդիւնաբերութեան մէջ ԻԻՀի ներգրաւման, նախատեսուած համաձայնութիւնների կարգաւորման ու Թեհրանում հերթական նիստերի գումարման մասին: Ի թիւս այլ փաստաթղթերի կողմերը ստորագրեցին սահմանային մաքսատների կահաւորման եւ շուրջօրեայ ռեժիմով աշխատելու փոխըմբռնման յուշագիրը: Վերջինս ունէր կարեւոր նշանակութիւն, քանի որ այդուհետ բացառուելու էր ՀՀ-ԻԻՀ սահմանային մաքսատների աշխատանքների հանգստեան օրերով ընդհատումը:

Օրակարգային հարցերն էին առեւտրական համատեղ յանձնաժողովի անդամների ներկայացումը, ցուցահանդէս-վաճառքի կազմակերպումը, շղթայական խանութների կարիքների փոխադարձ ապահովման համար անհրաժեշտ ապրանքների ցուցակների փոխանակումը եւ զբօսաշրջութեան ոլորտում գործակցութեան ընդլայնումը[103]:

1992ից իվեր 1996ը դարձաւ ամենաարդիւնաւէտ տարին ԻԻՀ-ՀՀ յարաբերութիւններում: 1996ին առեւտրաշրջանառութիւնը հասաւ 193 մլն. դոլարի, որից մօտ 150 մլն. ներմուծում, 43 մլն.՝ արտահանում: Ներմուծումը աւելի քան երեք անգամ գերազանցում էր արտահանմանը: Այդ նիշն աւելացաւ միայն 2008ին (260 մլն. դոլար), 2011ին՝ 300 մլն. դոլարից աւելի: Մինչդեռ 1997ին առտրաշրջանառութիւնը կազմեց 131 մլն. դոլար, որից 88 մլն. ներմուծում, 42 մլն.՝ արտահանում: 1996ի համեմատ, 1997ին ԻԻՀից ներմուծումը նուազեց 61 մլն. դոլարով, որը պայմանաւորուած էր մաքսային բարձր տուրքերով, իրանական ապրանքների ցածր որակով, ՀՀ-ՌԴ տնտեսական խորացող գործակցութեամբ, 'Մելլաթ' բանկի փոխտնօրէնների ձերբակալմամբ եւ այլ գործօններով:

1996 Յունուարի 9ին տեղի ունեցաւ Արաքս գետի վրայ ՀՀ-ԻԻՀ 400 տոննա բեռնակրութեամբ հիմնական կամուրջի հանդիսաւոր բացումը, որին մասնակցեցին ՀՀի եւ ԻԻՀի բարձրաստիճան պաշտօնեաներ: Կամուրջն առաջին համատեղ կառոյցն էր եւ ՀՀի համար արտաքին աշխարհ դուրս գալու բացառիկ ուղի[104]: Կամուրջը նպաստեց առեւտրաշրջանառութեան ընդլայնմանը: Բեռնափոխադրումները աւելացան 3-4 անգամ: Բաւական է նշել, որ եթէ 1994ին երկկողմ առեւտրաշրջանառութիւնը կազմում էր 57 մլն., 1995ին՝ 94 մլն., ապա 1996ին կամուրջի շահագործումից յետոյ՝ 193 մլն. դոլար, որը մինչեւ 2011 մնաց անգերազանցելի:

1997ին ՀՀ նախագահ Տէր Պետրոսեանի խօսքով՝ եթէ մէկ շաբաթով դադարի կամուրջի գործունէութիւնը, ապա գները ՀՀում կ'աճեն երկու անգամ, այսինքն՝ տեղի կ'ունենայ բնակչութեան կենսամակարդակի 100 տոկոսանոց անկում[105]:

ՀՀ Մեղրիի մաքսակէտի համալիրը շահագործման է յանձնուել 1998ին՝ կամրջի հարեւանութեամբ, իսկ ԻԻՀի մաքսատան համալիրը՝ 1996ին[106]:

ՀՀ-ԻԻՀ տնտեսական գործակցութիւնը վտանգուեց երբ 1997 Յունիսի 29ին ձերբակալուեցին ԻԻՀ քաղաքացիներ՝ 'Մելլաթ' բանկի երեւանեան մասնաճիւղի փոխտնօրէններ Ռ. Հախնազարեանը եւ Վ. Զատիկեանը՝ 26,000 դոլար կաշառք ստանալու մեղադրանքով: Նրանք ընդունել էին մեղադրանքը:

ՀՀ դատախազութիւնը, յարգելով ԻԻՀ դեսպանութեան միջնորդութիւնը, որպէս խափանման միջոց, ընտրել էր ստորագրութիւնը բնակութեան վայրից չհեռանալու մասին[107]: Հայկական կողմը մեղադրանքներ չհնչեցրեց, որն էլ նպաստեց, որ միջպետական յարաբերութիւնները մնան բարուօք:

Չնայած յիշեալ միջադէպին կանոնաւոր յարաբերութիւնները շարունակուեցին: 1997 Հոկտեմբերի 2ին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար-նախարար Շահէն Գարամանուկեանն այցելեց ԻԻՀ: 1997ին ՀՀ այցելեց ԻԻՀ առեւտրի նախարար Մոհամմադ Շարիաթմադարին: Երեւանում տեղի ունեցաւ ԻԻՀ առեւտրաարդիւնաբերական 4րդ ցուցահանդէսը, որին մասնակցում էին իրանական մօտ 90 ձեռնարկութիւններ[108]: Ներկայացուեց իրանական արդիւնաբերութիւնը, որի վարկը նսեմացուել էր ցածրորակ ապրանքներ ներկրողների գործունէութեամբ:

1998 Յուլիսի 16ին տնտեսական գործակցութեան համատեղ յանձնաժողովի 2րդ նիստին մասնակցելու նպատակով Թեհրան մեկնեց ՀՀ կառավարութեան աշխատակազմի ղեկավար, շուտափոյթ եւ անյետաձգելի հարցերի նախարար, հայ-իրանական կապերի համաձայնեցման յանձնաժողովի նախագահ Գարամանուկեանը: Յուլիսի 20ին ԻԻՀ տնտեսութեան նախարար Հ. Նամազին եւ Գարամանուկեանը

ստորագրեցին ՀՀ եւ ԻԻՀ միջեւ տնտեսական գործակցութեան պայմանագիր: Ըստ դրա ԻԻՀի զարգացման բանկը ՀՀին յատկացնում էր 5 մլն դոլարի վարկ, որով ՀՀն ներմուծելու էր միայն ԻԻՀում արտադրուած ապրանքներ[109]:

1998ին ՀՀ արտաքին տնտեսական կապերի մէջ ԻԻՀն ՌԴից յետոյ գրաւում էր երկրորդ տեղը: ՀՀում գործում էին 200ից աւելի համատեղ ձեռնարկութիւններ: ԻԻՀի առանձին նահանգներ ուղղակի կապեր էին հաստատել ՀՀի ե՛ւ պետական, ե՛ւ մասնաւոր հատուածների հետ: Անհրաժեշտութիւն էր զգացւում ԻԻՀ-ՀՀ գործակցութիւնը առեւտրականից տեղափոխել արտադրատնտեսական՝ արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան, շինարարութեան ոլորտներ, խորացնել արհեստագիտութեան եւ գիտելիքների փոխանակման գործընթացը եւ խթանել ներդրումներն այդ ճիւղերում: Միւս կողմից՝ 1998ի դրութեամբ կողմերի միջեւ ստորագրուել էին 80ից աւելի փաստաթղթեր, բայց դրանց մեծ մասը չէր գործում: 1998ի Յուլիսին Թեհրանում համատեղ յանձնաժողովների նիստում մտահոգութիւն յայտնուեց տնտեսական կապերում հնարաւորութիւնների ոչ-լիարժէք օգտագործման մասին[110]: Անհրաժեշտ համարուեց ուսումնասիրել 6 տարուայ ընթացքում ձեռք բերուած յաջողութիւններն ու թերացումները եւ որոշակի ծրագրեր ներկայացնել:

Կողմերը գործակցութիւն ծաւալեցին գիւղատնտեսութեան ոլորտում: Դեռեւս 1996 Դեկտեմբերի 25-29ը Երեւան այցելած ԻԻՀ փոխնախագահ Հաբիբիի գլխաւորած պատուիրակութեան անդամ ԻԻՀ արդիւնաբերութեան փոխնախարար Հասան Նաջին ՀՀ գիւղատնտեսութեան նախարարութիւնում քննարկուեց սննդի արդիւնաբերութեան արտադրութեան ոլորտներում տնտեսական կապերի խորացման հարցը[111]: Այդ ամէնի արդիւնքում 1997 Յունիսի 15ին կնքուեց փոխըմբռնման յուշագիր, որով իրանական կողմը Էջմիածնի երկրագործութեան գիտահետազօտական ինստիտուտի 50 հա հողատարածութեան վրայ անհատոյց տեղադրեց իրանական արտադրութեան բարձր ճնշմամբ համակարգեր: 1998 Յուլիսի 2ին ՀՀ գիւղատնտեսութեան նախարար Վլադիմիր Մովսիսեանը Թեհրանում ստորագրեց գործակցութեան մասին համաձայնագիր, իսկ Յուլիսի 19ին ստորագրւում է յուշագիր գիւղատնտեսութեանը վերաբերող աշխատանքների մասին[112]: Ուսումնասիրութիւնների համար 1998 Հոկտեմբերի 20ին Հայկական Գիւղատնտեսական Ակադեմիայի եւ Խաղողագործութեան, Գինեգործութեան ու Պտղաբուծութեան Գիտահետազօտական Ինստիտուտի գիտաշխատողները այցելեցին ԻԻՀ:

Աշխուժացում նկատուեց **ՀՀ մարզեր-ԻԻՀ նահանգներ** ծիրում: 1998 Հոկտեմբերի 23ին Կապանում Արեւելեան Ատրպատականի նահանգապետի տեղակալ Մոհամմադ Նաջաֆի Ազարին եւ Սիւնիքի մարզպետ Ռոման Նաւասարդեանը ստորագրեցին միջպետական հանդիպման արձանագրութիւն, որով ուսումնասիրուելու էին Սիւնիքի մարզում արտադրուող

կաշուի հումքի եւ բրդի գնման իրանական կողմի օժանդակութեան հնարաւորութիւններ[113]: Կողմերը պայմանաւորուեցին երեք ամսուայ ընթացքում մարզում կազմակերպել նահանգի, իսկ նահանգում՝ մարզի ապրանքների ցուցահանդէս-վաճառք: Իրանական կողմը պատրաստակամ էր մասնակցել մարզի ճանապարհների նորոգման աշխատանքներին եւ ճկնաբուծութեան զարգացմանը, մարզն ապահովել անհրաժեշտ քանակութեամբ մազութով ու հեղուկ գազով: Առեւտուրը խթանելու նպատակով կազմակերպուելու էր էժան եւ որակեալ ապրանքների վաճառք մարզում, պայմանով, որ հայկական կողմը տրամադրի համապատասխան տարածք եւ աշխատողներ, իսկ իրանական կողմը՝ ապրանքներ:

2004 Մայիսի 13ին ստորագրուեց ԻԻՀ-ՀՀ գազատարի կառուցման վերջնական պայմանագիրը: Բանակցութիւններում քննարկուեցին գազի որակը, սակագինը, մատակարարման ծաւալը: Պայմանագիրը շահաւէտ է եւ աւելի ճիշտ կը լինի այն անուանել գազ՝ ելեկտրուժի դիմաց ծրագիր[114]:

2004 Սեպտեմբերի 8-9ը ԻԻՀ նախագահ Մահմուդ Խաթամիի՝ ՀՀ այցում ստորագրուեցին նաեւ գազատարի Մեղրի-Քաջարան հատուածի ֆինանսաւորման եւ գազատարի կառուցման յանձնառութեան մասին փաստաթղթերը: Գազամուղի կառուցումը որոշակիօրէն կապուած էր ԱՄՆի շահերի հետ: 2004 Հոկտեմբերի 4ին Ուաշինգտընում տնտեսական գործակցութեան հայ-ամերիկեան աշխատանքային խմբի նիստի փաստաթղթի նախագծի 21րդ կէտը վերաբերում էր ԻԻՀ-ՀՀ գազամուղի շինարարութեան ծրագրին: ՀՀ կառավարութեանն առաջարկւում էր ստանալ իրաւական խորհրդատուութիւն՝ ԱՄՆի կողմից ԻԻՀի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մասին օրէնքի ազդեցութիւնից խուսափելու առումով[115]:

Իրան-Հայաստան գազամուղի բացումը տեղի ունեցաւ 2007 Մարտի 19ին ՀՀ եւ ԻԻՀի նախագահներ՝ Ռոբերտ Քոչարեանի եւ Մահմուդ Ահմադինեժադի մասնակցութեամբ:

Այսպիսով, ՀՀ-ԻԻՀ տնտեսական գործակցութիւնը, թէեւ դանդաղ թափով, որոշակի յաջողութիւններ ունեցաւ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարող ենք եզրակացնել.

1. ՀՀ-ԻԻՀ տնտեսական յարաբերութիւնների պատմութեան վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այդ կապերի պահպանումը, զարգացումն ու խորացումը կարեւոր նշանակութիւն ունեն երկու պետութիւնների համար:
2. Յետխորհրդային տարիներին ԻԻՀն կարեւորել է ՀՀի տնտեսական համակարգի կայունութիւնը եւ անվտանգութիւնը: Թեհրանը աչալրջօրէն հետեւել է ՀՀի ներքաղաքական զարգացումներին, այն ընկալել որպէս շրջանային անվտանգութեան պահպանման բաղկացուցիչ մասը:
3. Շրջափակուած ՀՀի համար ԻԻՀն ցուցաբերել է մարդասիրական մեծ աջակցութիւն, որն, անշուշտ, իրանական պետական շահերից էր բխում:

Այլ կերպ ասած՝ ոչ միայն տեսականում, այլ նաեւ գործնականում ԻԻՀն եղել եւ մնում է ՀՀի վստահելի սահմանակից հարեւանը եւ տնտեսական գործընկերը:
4. ԻԻՀ-ՀՀ տնտեսական կապերի ստեղծման եւ ամրապնդման գործում զգալի ներդրում են ունեցել, բազմաթիւ գործառոյթներ ապահովել իրանահայ համայնքի գործիչներ, հոգեւոր եւ մշակութային կառոյցների առաջնորդներ:
5. Տնտեսական կապերի գործում նշանակալից էր 1992 Դեկտեմբերի 22-25ը ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանի բանակցութիւնները ԻԻՀի ղեկավարութեան հետ: Դա հայկական կողմի դիւանագիտական յաջողութիւնն էր, որում ստորագրուեցին մի շարք տնտեսական պայմանագրեր:
6. Ոչ-բոլոր փաստաթղթերում ամրագրուած դրոյթներն իրականութիւն դարձան: Դա պայմանաւորուած էր կողմերի միմեանց ճանաչողութեան, փորձի եւ մասնագիտական կարողութիւնների պակասով:
7. ՀՀի դեսպանութիւնը տնտեսական բնոյթի բազմաթիւ առաջարկութիւններ էր ստանում անհատներից: Առաջարկում էին հագուստեղէն, սննդամթերք՝ ՀՀում արտադրուող ապրանքների դիմաց: Փաստօրէն Թեհրանը խուսափելով պետական առաջարկից՝ ձգտում էր քաղաքական հարցադրումներից զերծ մնալ: Ռազմավարական նշանակութիւն ունեցող ապրանքների (վառելանիւթ, հացահատիկ) վերաբերեալ առաջարկները հասցէագրւում էին հայ-իրանական կապերի յանձնախմբին: Տնտեսական բնոյթի առաջարկները ՀՀ դեսպանութիւնը վերահասցէագրում էր Թեհրանում գործող Իրան-Հայաստան առարդպալատ:
8. ՀՀի մարզերի եւ ԻԻՀի նահանգների միջեւ գործակցութիւնը՝ փորձի փոխանակումը, ներդրումների խթանումը, համատեղ ձեռնարկութիւնների հիմնումն աշխուժացում բերեցին գիւղատնտեսութեան ոլորտում:
9. ԻԻՀն եւ ՀՀն նոր ծրագրեր իրականացնելու համար պէտք է համախմբեն իրենց հնարաւորութիւնները: Փորձը ցոյց է տուել, որ դրանց արդիւնաւէտութիւնն ապահովելու համար անհրաժեշտ է միաժամանակ չձեռնարկել միքանի մեծածաւալ նախագծեր՝ ֆինանսական եւ այլ պատճառներով: Նոր նախագծի քննարկումները պէտք է սկսել ընթացիկ, մեծ միջոցներ պահանջող գործի լիարժէք եւ վերջնական կատարումից յետոյ:
10. 1990ականների վերջերի տնտեսութեան բնագաւառում ԻԻՀի եւ ՀՀի առեւտրաշրջանառութեան ցածր մակարդակը պայմանաւորուած էր նաեւ այդ երկրի տնտեսական փակ համակարգով զարգանալու հանգամանքով եւ հեռահաղորդակցութեան նպաստաւոր հնարաւորութիւնների բացակայութեամբ: Դա հիմք է տալիս գալ այն եզրահանգմանը, որ ԻԻՀ-ՀՀ տնտեսական գործակցութիւնը չի զարգացել դրական ուժականութեամբ: Այստեղ եղել են ակնյայտ ելեւէջումներ, երբ իրանական ապրանքները կա՛մ ողողել են ՀՀ շուկան կա՛մ էլ ՀՀ տնտեսութեան զարգացման ու այլ երկրներից ներմուծումների մեծացման պատճառով, դուրս մղուել այնտեղից:

Ակնյայտ է, որ ԻԻՀի հետ յարաբերութիւնների կառուցման համար լաւ հիմք կարող է դառնալ ուժանիւթի բնագաւառը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] http://araxmag.blogspot.am/2010/01/blog-post_2084.html դիտուել է 3 Փետրուարի, 2018ին:

[2] Վահան Բայբուրդեան, «Հայ-Իրանական Յարաբերութիւնները Հայաստանի Անկախութեան Ձեռքբերումից Յետոյ», *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկրներ եւ Ժողովուրդներ, Հտր. 17*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ. 1998, էջ 9:

[3] Է. Մինասեան, *Սոցիալ-Տնտեսական Վերափոխումները Հայաստանի Հանրապետութիւնում 1990-2003 թթ.*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2003,էջ 65:

[4] Հայաստանի Ազգային Արխիւ, ֆ. 326, g. 9, գ. 170, թթ. 63-4:

[5] http://yerevan.mfa.ir/index.aspx?siteid=16&pageid=3377 روابط سیاسی դիտուել է 2 Փետրուարի, 2018ին:

[6] ՀԱԱ, ֆ. 326, g. 9, գ. 196, թ. 2. նաեւ՝ *Բանբեր Հայաստանի Արխիւների*, N-1(100), 2005, էջ 45:

[7] Յակոբ Չաքրեան, *Ղարաբաղեան Հիմնահարցը Հայ-Թուրքական Յարաբերութիւնների Համատեքստում*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտի Հրատ., 1998, էջ 23:

[8] 1991 Փետրուարի 15-20ը Երեւան այցելեց ԻԻՀի «Մոսթազաֆան եւ Ջանբազան» հիմնադրամի նախագահի տեղակալ Ֆ. Շաբանեանը եւ Հանքերի ու Արդիւնաբերական Կազմակերպութեան նախագահ Զ. Միրաքբարին: Նոյն թուականի Նոյեմբերի 9ին Թաւրիզ ու Թեհրան այցելեց Երեւանի քաղխորհրդի գործկոմի նախագահ Հենրիկ Գալստեանի գլխաւորած պատուիրակութիւնը, որի կազմում էին «Արիր» հայ-իրանական առաջին համատեղ ձեռնարկութեան ներկայացուցիչները:

[9] «Սաթի» փոխադրամիջոցի ընկերութեան բաժնետոմսերի 78%ը պատկանում է Աբրահամեան ընտանիքին: Ընկերութիւնը կենտրոնացնում է Ջուլֆայից ստացուող փոխադրումները եւ կարող է միանգամից 450 տոննա բեռ տեղափոխել: Բաթումից եւ Փոթիից բեռների տեղափոխման հարցում տարանցիկ դեր կատարող ՀՀն հետաքրքրում էր «Սաթի»ին:

[10] Յակոբ Ասատրեան, «Իրանը Արգելքներ Չի Դնում Մեր Համագործակցութեանը Ասում են Իրանահայ Գործարարները», *Ազգ* օրաթերթ, 28 Յուլիսի, 1992:

[11] «Տօնուեց Իրան-Հայաստան Առեւտրական Պալատի Հիմնադրման 22-ամեակը», «*Յոյս» Մշակութային եւ Հասարակական Երկշաբաթաթերթ*, թիւ 243, 29 Յուլիս 2017. նաեւ՝ http://www.hooys.com/?p=3728 դիտուել է 2 Փետրուարի, 2018ին:

[12] Լեւոն Տէր Պետրոսեան, *Ընտրանի: Ելոյթներ, Յօդուածներ, Հարցազրոյցներ*, կազմ., խմբ., առաջաբ. եւ վերջաբ.՝ Ա. Բ. Սարգսեան, Երեւան, «Փրինթինֆօ» ՀՁ ՍՊԸ, 2006, էջ 259. նաեւ՝ http://www.aniarc.am/2017/11/11/ltp-11-november-1991/ դիտուել է 2 Փետրուարի 2018ին:

[13] Վահան Բայբուրդեան, *Իրանի Հայ Համայնքը. Արդի Հիմնախնդիրներ*, Երեւան, «Լուսակն» Հրատ., 2013, էջ 148-9:

[14] Վահան Բայբուրդեան, *Իրանն Այսօր (Տեղեկատու)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1999, էջ 309:

[15] Նոյն, էջ 296:
[16] Էմմա Բեգիջանեան, «Ոչ Թէ 300 Այլ, 500 Տոննա Վառելիք», *Ազգ*, 6 Փետրուար 1993:
[17] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թ. 24:
[18] Նոյն, թ. 25:
[19] Նոյն, ֆ. 827, ց. 1, գ. 127, թթ. 47-8:
[20] ՀՀ արդիւնաբերութեան նախարարութեան պատուիրակութիւնը մեկնեց ԻԻՀ՝ մասնակցելու ցուցահանդէսին՝ հաշուի առնելով նրա քաղաքական եւ տնտեսական նշանակութիւնը: 'Եունիսերվիս'ը կատարել էր աշխատանքների 60%ը, բայց իրանական կողմը չէր տալիս անգամ հրաւիրող կողմի հասցէն: Երկկողմ պայմանաւորուածութեամբ ՀՀում իրանական ապրանքների ցուցահանդէսը կազմակերպուելու էր հայկական կողմի հաշուին: 1992 Ապրիլի 4ին եւ 6ին ձեռնարկութիւնը հեռագիր էր ուղարկել ԻԻՀի առեւտրի փոխնախարար Հաբիբի Թաբաթաբային՝ հաստատելու 150 մ² տարածքի անվճար տրամադրումը ՀՀին: Իրանական կողմը Ապրիլի 7ին պատասխանեց, որ միայն 12 մ² տարածք է յատկացուել, որը ցուցահանդէսի ժամանակ վերածուեց 24 մ²ի: Փաստօրէն Թեհրանը հաւատարիմ չէր իր խոստմանը եւ ՀՀի մասնակցութիւնը սահմանափակուեց մի փոքր ներկայութեամբ:
[21] ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 127, թթ. 6-9:
[22] Նոյն, ֆ. 326, ց. 9, գ. 84, թ. 60:
[23] Նոյն, թ. 61:
[24] Նոյն, գ. 170, թ. 26:
[25] Էմմա Բեգիջանեան, *Իրանի Աշխարհաքաղաքական Դիրքը եւ Հայաստանը*, Երեւան, 1995, Ռազմավար. եւ Ազգ. Հետազօտ. Հայկ. Կենտր., էջ 17:
[26] 1992 Սեպտեմբերի 9ին ՀՀ ԱԳՆն տեղեկացրեց իրանական կողմին, որ ԻԻՀում ՀՀ գործերի հաւատարմատար եւ լիազօր ներկայացուցիչ է նշանակուած արեւելագէտ, պրոֆեսոր Վահան Բայբուրդեանը:
[27] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 173, թթ. 1-6:
[28] Նոյն, գ. 84, թթ. 103-6:
[29] Նոյն, գ. 173, թ. 2:
[30] Նոյն, թ. 105:
[31] Նոյն, թ. 6:
[32] http://www.president.am/hy/condolence/item/2017/01/09/President-Serzh-Sargsyan-condolence-on-death-of-ex-President-of-Iran/ դիտուել է 2 Փետրուար 2018:
[33] ՀՀ ԱԳՆ Պատմադիւանագիտական Արխիւ, ց. 1, գ. 283, թթ.14-6:
[34] Յակոբ Ասատրեան, «Հայ-Իրանական Կապերը Կրկին Ակտիւանում Են», *Ազգ*, 29 Դեկտեմբերի 1992:
[35] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 283, թթ. 6-7:
[36] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 178, թ. 8:
[37] Նոյն, թ. 9:
[38] Նոյն, թ. 10:
[39] «Ստացուած Գրութիւններ Երկրաշարժի Վերաբերեալ», *Լոյս Երկշաբաթաթերթ*, N15, Թեհրան, 31 Հոկտեմբերի 2000, էջ 5. նաեւ՝ «Իրանի Օժանդակութիւնների Առաջին Օդանաւը Երեւան Մեկնեց», էջ 1, *Ալիք*, Թեհրան 15, Դեկտեմբերի 1988.

նաեւ՝ «Իբրեւ Մէկ Եկեղեցի, Մէկ Ազգ, Մէկ Սիրտ Ու Մէկ Ձեռք Պիտի Լծուենք Օգնութեան Համահայկական Աշխատանքին», էջ 1, 22 Դեկտեմբերի 1988:

[40] Բայբուրդեան, *Իրանի Հայ Համայնքը*, էջ 69:

[41] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 283, թթ. 9-10:

[42] Նոյն, թթ. 11-2:

[43] Նոյն, թ. 13:

[44] «Հարցազրոյց Իրանահայ Ազգային-Հասարակական Գործիչ, Բարերար Լեւոն Ահարոնեանի Հետ», *Լոյս Երկշաբաթաթերթ*, N13, 30 Սեպտեմբերի 2000, էջ 12:

[45] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 285, թ. 152:

[46] ՀԱԱ, ֆ. 326, g. 9, գ. 27, թթ. 78-88:

[47] Նոյն, ֆ. 1177, g. 1, գ. 13, թթ. 4-5:

[48] Ապրիլին ՀՀի առեւտրի նախարար Տիգրան Գրիգորեանը այցելեց ԻԻՀ, Մայիսին՝ ՀՀ փոխադրամիջոցների նախարար Հենրիկ Քոչինեանը: Յունիսին ՀՀն մասնակցեց Թեհրանի միջազգային առեւտրական ցուցահանդէսին: 'Հայկական Աւիաուղիներ'ը բացեց Երեւան-Թեհրան կանոնաւոր չուերթ՝ շաբաթը մէկ: 1993ին ԻԻՀի փոխադրամիջոցների նախարար Սաիդ Քիան այցելեց ՀՀ, Հոկտեմբերին՝ ՀՀ կապի նախարար Գրիգոր Պողպատեանը՝ Թեհրան:

[49] ՀԱԱ, ֆ. 326, g. 9, գ. 178, թթ. 16-8:

[50] ՀԱԱ, ֆ. 326, g. 9, գ. 178, թթ. 17-8:

[51] Է. Մինասեան, «ՀՀ Սեփականաշնորհման Քաղաքականութիւնը Տնտեսութեան Ոլորտում 1991-2005 թթ.», *Լրատու 2, Գիտական Յօդուածների Ժողովածու* Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Ստեփանակերտ, 2007, էջ 18:

[52] ՀԱԱ, ֆ. 827, g. 1, գ. 139, թթ. 1-2:

[53] Դրանց ցուցադրման համար յատկացուել էր 2000 մ² տարածք Երեւանի Մարզահամերգային Համալիրում: ԻԻՀից ներմուծուել էր 149 տոննա բեռ՝ 205,000 դոլար արժողութեամբ. դրանց մօտ կէսը կազմում էր տաղավարի հաւաքովի տարրերը: Վաճառուած ապրանքներից որպէս յաւելեալ արժէքի վճար գանձուեց 3600 դոլար: Ցուցադրուած ապրանքների մեծ մասը չվաճառուեց, եւ 151,000 դոլար արժողութեամբ արտադրանք վերադարձուեց ԻԻՀ կամ նուիրուեց պետական ձեռնարկութիւնների: Միայն մասնակիցների տասնօրեայ հիւրանոցային եւ օդային ծառայութիւններից պետբիւջէ մուտքագրուեց 70,000 դոլար:

[54] ՀԱԱ, g. 1, գ. 283, թթ. 118-20:

[55] Նոյն, թ. 118:

[56] Նոյն, ֆ. 827, g. 1, գ. 137, թթ. 1-5:

[57] Նոյն, թթ. 6-9:

[58] Նոյն, թթ. 10-5:

[59] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 283, թթ. 133-4:

[60] ՀԱԱ, ֆ. 1177, g. 1, գ. 59, թ. 4:

[61] Նոյն, թ. 5:

[62] Նոյն, թ. 6:

[63] Նոյն, ֆ. 326, g. 9, գ. 32, թ. 28:

[64] «ԻԻՀ Մեջլիսի Հայ Պատգամաւոր Ա. Բաղոմեանի Այցը Ֆրանսիա՝ Լիոն Քաղաք», *Ազգ*, 15 Մայիսի 1991, էջ 5:

[65] 1992 Դեկտեմբերի 22ին Թեհրանում պաշտօնապէս բացուեց ՀՀ դեսպանութիւնը: Բացման արարողութեանը մասնակցեցին ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանի գլխատրած պատուիրակութիւնը, Թեհրանում հաւատարմագրուած դիւանագիտական մարմնի ներկայացուցիչները, Իրանի հայ համայնքի հոգեւոր առաջնորդները: ՀՀ դեսպանութեան անձնակազմին բնակելի տարածքով ապահովելու հարցում օգնեցին Իրանահայ Ազգային եւ Մշակութային Միութիւնը, Իրանի Հայ Կաթողիկէ Եկեղեցու առաջնորդարանը:

[66] «Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութեան Բացումը Թեհրանում», *Ազգ*, 29 Դեկտեմբերի 1992, էջ 1:

[67] Բեգիջանեան, էջ 17:

[68] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 67, թ. 40:

[69] ՀԱԱ, ֆ. 326, g. 9, գ. 178, թ. 1:

[70] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 283, թթ. 92-3:

[71] Նոյն, թ. 95:

[72] ՀԱԱ, ֆ. 326, g. 9, գ. 181, թթ. 11-5: Տե՛ս նոյնը նաեւ՝ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 283, թթ. 122-3:

[73] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 285, թ. 90: Տե՛ս նոյնը նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 827, g. 1, գ. 137, թթ. 63-6:

[74] Նոյն, թթ. 91-5:

[75] ՀԱԱ, ֆ. 827, g. 1, գ. 137, թ. 55:

[76] Նոյն, թ. 59:

[77] Նոյն, թթ. 63-6:

[78] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 242, թ. 30:

[79] Նոյն, թ. 38:

[80] Նոյն, g. 1, գ. 285, թ. 148:

[81] ՀԱԱ, ֆ. 827, g. 1, գ. 137, թ. 88:

[82] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 242, թ. 49:

[83] «Մելլաթ Բանկ» ՓԲԸն հիմնուել է 1992 Մայիսին ՀՀ եւ ԻԻՀ միջեւ կնքուած «Բարեկամութեան եւ Գործակցութեան Մասին» համատեղ յայտարարութեան համաձայն, ՀՀ Կենտրոնական Բանկի եւ ԻԻՀ «Մելլաթ»ի միջեւ կնքուած համաձայնագիր-թոյլտուութեան, որպէս ԻԻՀ «Մելլաթ»ի երեւանեան մասնաճիւղ: Մասնաճիւղը իր գործունէութիւնը սկսել է 1995ին համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից 1995 Յունուարի 10ին տրուած Հ-ՕՄ-1/4 արտօնագրի: 02.09.1997ին Երեւանի մասնաճիւղը վերակազմաւորուել է դուստր բանկ փակ բաժնետիրական ընկերութեան՝ իրաւաբանական անձի կարգավիճակով, իսկ 27 Յուլիս 2005ին վերանուանուել է որպէս փակ բաժնետիրական ընկերութիւն: Կանոնադրական դրամագլուխը 32,100,000,000 ՀՀ դրամ է, որը ապահովել է ԻԻՀ «Մելլաթ» ը: Բանկի միակ բաժնետէրն է ԻԻՀ «Մելլաթ»ը (http://www.mellatbank.am/am/about/history դիտուել է 3 Փետրուարի 2018):

[84] ՀԱԱ, ֆ. 827, g. 1, գ. 137, թթ. 102-4:

[85] ՀԱԱ, ֆ. 827, g. 1, գ. 137, թթ. 44-8, թ. 50. նաեւ՝ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 1, գ. 283, թթ. 138-9:

[86] 1994 Փետրուարի 3ին հայ-իրանական կապերի յանձնաժողովը քննարկեց սահմանամերձ առեւտրի, գազատարի, բեռնափոխադրման միջազգային համաձայ-

նագրի՝ ՀՀի անդամակցութեան հարցեր: Մարտի 10ի նիստում առաջարկուեց, որ ՀՀ առարդպալատը կապեր հաստատի իրանահայկական առեւտրական պալատի հետ եւ մշակի աշխատանքային գործընթաց: 1994 Ապրիլի 20ին ՀՀ դեսպանութիւնում տեղի ունեցաւ հանդիպում Իրան-Հայաստան առեւտրաարդիւնաբերական պալատի անդամների հետ: Հանդիպմանը քննարկուեցին դեսպանութիւն-պալատ գործակցութեան ձեւերը: Պալատին անդամագրուել էին շուրջ 60 հոգի: Ղեկավար մարմինը բաղկացած էր 9 հոգուց, որից 4ը հայ էին:
1994 Սեպտեմբերի 15ին Իրան-Հայաստան կապերի յանձնաժողովը յուշագրով հայ-իրանական կապերի համաձայնեցման յանձնաժողովին առաջարկեց կազմակերպել ուժանիւթի ցուցահանդէսների պայմանագրի կնքում, յանձնման վայրում ապրանքների բեռնաթափում, թեթեւ արդիւնաբերական ապրանքների ներմուծման եւ արտահանման համար մաքսային գնացուցակների մշակում:
1993 Հոկտեմբերի 10ին ԻԻՀում ՀՀ դեսպանութեան խորհրդական Գ. Առաքելեանը հանդիպեց ԻԻՀի տնտեսութեան նախարարութեան արտաքին կապերի վարչութեան պետ, իրանա-հայկական համադրող յանձնաժողովի նորանշանակ համանախագահ Մ. Բիաբանիին: Քննարկուեցին գազամուղի շինարարութեան, սահմանամերձ առեւտրի եւ վառելիքի տեղափոխման հարցեր:

87 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 283, թ.103:

88 «Հայ-Իրանական Բանակցութիւններ», *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 5 Մայիսի 1995:

89 *Հայաստանի Հանրապետութեան Միջազգային Պայմանագրերի Ժողովածու 1991-1995 թթ., N-1(1)*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2002, էջ 605-8:

90 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 5, գ. 239, թթ. 32-4:

91 «Իրանը Ծրագրում է 2000 Թուականին 1 Մլրդ Խմ Գազ Արտահանել Հայաստան», *Ազգ*, 18 Փետրուարի 1997:

92 Պատուիրակութեան կազմում էին «Հայկաբէլ», «Հայէլեկտրամեքենայ», «Կանազ», «Նաիրիտ» ընկերութիւնների, Կապանի եւ Ագարակի կոմբինատների, Գորիսի միկրոշարժիչների եւ «Գամմա» գործարանների, Գիւմրիի գուլպայի գործարանի, «Անդրոն» եւ «Հայգունմետգիտնախագիծ» հիմնարկների տնօրէնները:

93 ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 40, թթ. 3-4:

94 Նոյն, թ. 24:

95 Նոյն, թ. 31:

96 Կասպից Ծովի հարաւ-արեւմտեան առափնեայ Գիլիան Նահանգը եւ Էնզելի նաւահանգիստը ՀՀի համար ունեն բացառիկ նշանակութիւն: Էնզելիի նաւահանգստի միջոցով ՀՀն կապ է հաստատում ՌԴի եւ Կենտրոնական Ասիայի հետ: Էնզելի նաւահանգիստը ՀՀի համար, որպէս տնտեսական կապուղի, Փոթիից յետոյ երկրորդ ծովային ճանապարհն է:

97 ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 5, գ. 242, թթ. 242-3:

98 Նոյն, թ. 243:

99 Գ. Բաղալեան, «Հայաստան-Իրան. Յարաբերութիւնները 20 Տարեկան Են», *Ալիք*, 2012, էջ 246:

100 ՀՀ ԱԺ մամուլի ծառայութիւն, «Իրանի Փոխնախագահը Ելոյթ Ունեցաւ ԱԺ Պատգամաւորների Հետ Հանդիպմանը», *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 27 Դեկտեմբերի 1996:

[101] Նոյն:
[102] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 5, գ. 239, թթ. 1-4:
[103] Նոյն:
[104] Կամուրջի կառուցման գործում մեծ դեր ունեցան Թելման Տէր Պետրոսեանը, պրոֆ. Ժ. Միրզաբեկեանը, Ա. Աւետիսեանը, Հ. Քոչինեանը, Ֆ. Փիրումեանը, ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամաւորներ՝ Վարդանեանը, Բաղումեանը եւ գործարար Ահարոնեանը: Վերջինիս 2003 Սեպտեմբերի 26ին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի կողմից շնորհուեց շնորհակալագիր:
[105] Տէր Պետրոսեան, էջ 496:
[106] Գ. Բաղալեան, *Իրան. Հանրագիտարան*, Երեւան, 2011, Հեղ. Հրատ., էջ 448:
[107] «ԻԻՀ Դեսպանութեան Մամլոյ Հաղորդագրութիւն. ԻԻՀ Դեսպանութիւնը Պահանջում է 'Լինել Անկեղծ եւ Յարգել Միջազգային Նորմերը'», *Ազգ*, 12 Յուլիսի 1997, էջ 1:
[108] «Մարզահամալիրում Բացուեց Իրանի Առեւտրաարդիւնաբերական Ցուցահանդէս», *Ազգ*, 6 Յունիսի 1997:
[109] «Հայաստան-Իրան Տնտեսական Համագործակցութեան Պայմանագիր», *Ազգ*, 21 Յուլիսի 1998, էջ 1:
[110] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 11, գ. 182, թթ. 4-5:
[111] Նոյն, g. 5, գ. 239, թ. 27:
[112] Նոյն, g. 11, գ. 182, թ. 1:
[113] Նոյն, թ. 22:
[114] Գ. Իսկանդարեան, «Հայաստան-Իրան Յարաբերութիւնները Էներգետիկայի Ոլորտում», *Հայաստան-Իրան. 20 Տարի Համագործակցութեան Ճանապարհով, Միջազգային Գիտաժողովի Նիւթեր, 13 Մարտի 2012*, Երեւան, «Զանգակ», Հրատ. 2012, էջ 92:
[115] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 11, գ. 183, թ. 22:

ECONOMIC RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE ISLAMIC REPUBLIC OF IRAN IN THE 1990S (Summary)

KAREN MKRTCHYAN
K86Mkrtchyan@gmail.com

The study focuses on the winding road of the development of economic relations between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, which was affected by the Karabagh war of self-determination.

It explores the establishment of economic relations between the blockaded Republic and Iran and the active involvement of the Armenian community of Iran in bringing about these relations.

The paper highlights in particular the experience Armenia gained by trading with the Russian Federation and Turkmenistan through the Iranian Enzeli port on the Caspian Sea, undertakiung the Iran-Armenia Gas Supply project, establishing an electricity generatring plant on the Araxes river, and carrying out the notorious 'junk' metal export from Armenia to Iran.